Նիկոլը դարձավ այն լակմուսի թուղթը, որը պատռեց շատերի դիմակը: 2018-ից հետո տեսանք, որ այն մարդիկ, որոնց մենք համարել ենք մտավորական, իրականում մտավորական չեն, մերն անտիէլիտան է, նրանց հեշտությամբ կարելի է գնել: Նիկոլը հանդիսացավ այն կերպարը, որը կարող է հանգիստ ասել՝ էս չլի՞ ձեր մտավորականությունը:

Կարդացեք՝ էջ 4

Ծեծողներից մեկը «Արթիկ» քրեակատարողականի պետի տեղակալ Ռուբեն Գասպարյանի որդին է: Ծեծվողի հայրը Կոթի գյուղից է, մայրը՝ Զորականից: Մեր տեղեկություններով՝ ընտանիքում խնդիրներ կան: Դեպքի պատճառը եղել է այն, որ Ալենն ինչ-որ առիթով հայհոյել է Նոյեմբերյանի պետական քոլեջում սովորող զորականցի տղաներին:

Կարդացեք՝ էջ 6

Սա ոչ այլ ինչ է, քան թշնամություն, ատելություն քաղաքի նկատմամբ: Էս դարավոր ծառերը, որոնք էս քաղաքի շքեղությունն էին ապահովում, ծիծաղելի տեսք են ստացել: Մի նայեք՝ ոնց են կոտորել: Մարդիկ դուրս եկան, բողոքեցինք, բայց ո՞վ է Հայաստանում մարդկանց լսում: Ծառն ո՞ւմ էր խանգարում, թթվածին պետք է շնչեինք:

Կարդացեք՝ էջ 7

Հրապարակ

Hraparak daily newspaper
4/41 Mashtoc St.
0010 Yerevan, RA
tel.52 66 70
info@hraparak.am

ISSN 1829-2372

ՕՐԱԹԵՐԹ, 200 դրամ

N 193 (4095), 29 նոյեմբեր, շաբաթ, 2025

www.hraparak.am

Կառավարության հոկտեմբերի 23-ի նիստում հաստատված որոշմամբ՝ ԱԺ շենքին կից կտեղադրվի արտաքին վերելակ: Հիմնավորման մեջ նշվում է, որ ներկայում պատգամավորներն ու հրավիրված անձինք նիստերի դահլիճ եւ հարակից տարածքներ հասնում են վարչական շենքի ներսով՝ անցնելով մի շարք միջանցքներ եւ աստիճանավանդակներ, ինչը «հաճախ հանգեցնում է մարդաշատության, տեղաշարժման դժվարությունների եւ անվտանգության ապահովման խնդիրների»: «Նոր արտաքին վերելակի կառուցումը նպատակ ունի բացառել նշված խնդիրները եւ ապահովել ավելի հարմար ու անվտանգ մուտք ԱԺ շենքի տարբեր հատվածներ»,- ասված է 25,99 միլիոն դրամ ծախս պահանջող որոշման մեջ: Շինաշխատանքներն արդեն սկսվել են, պարզվում է՝ վերելակը կառուցվում է ԱԺ-ում վերջերս հիմնված սրճարանի տարածքում, հավանաբար՝ որպեսզի ԱԺ նախագահությունն ու օրենսդիրները նեղություն չքաշեն երկար քայլելու եւ դահլիճից վիտրաժային վերելակով՝ տեսարանը վայելելով, սահուն իջնեն սրճարան, ճանապարհին չհանդիպելով անցանկալի անձանց՝ լրագրողներին: Բանն այն է, որ այդ սրճարանից ավելի հաճախ ՔՊ-ականներն են օգտվում, երբեմն՝ նրանց փորձագետներն ու օգնականները: «Հեղափոխականներն» այնքան են զարգացել, որ հարկ չեն համարում երկու քայլ ավել անել եւ բյուջեն ծախսում են՝ իրենց կյանքն ավելի հարմարավետ դարձնելու համար:

Գրել էինք, որ ՔՊ ֆրակցիայի անկուսակցականները դիմել են ՔՊ մտնելու համար: Գագիկ Մելքոնյանը հաստատել էր տեղեկությունը: Երեկ էլ նախկին ԲՀԿ-ական Սերգեյ Բագրատյանը չհերքեց, որ դիմել է ՔՊ-ին, սակայն դիմումը դեռեւս չեն քննել: 18-ին, երբ ԲՀԿ-ն Նիկոլ Փաշինյանի հետ կոալիցիա կազմեց, Բագրատյանը դեռ Ծառուկյանի թիմում էր, երբ ԲՀԿ-ն բաժանվեց ՔՊ-ից, Բագրատյանը հայտարարեց, որ լքում է ԲՀԿ-ն, իսկ 2021 թ. ընտրություններին ՔՊ ցուցակով պատգամավոր դարձավ՝ անկուսակցականի կարգավիճակում: «Մինչ այս պահը չեմ անդամագրվել ՔՊ-ին, քանի որ ընտրվել եմ որպես անկուսակցական, ընտրողն ինձ այդ կարգավիճակում է ընտրել, իսկ հիմա խորհրդարանի ժամկետը լրանում է, որոշել եմ կուսակցական դառնալ»,- ասաց նա: Բայց Դուք այսպես, թե այնպես ՔՊ-ի հետ էիք, շատերը չեն էլ իմացել՝ կուսակցական եք, թե ոչ, ինչո՞ւ հիմա որոշեցիք դառնալ: Բագրատյանը բացատրեց. «Ես գաղափարական, արժեհամակարգային իմաստով՝ մրցակցություն, հավասարություն, արդարություն եւ այլն, այս արժեքները, կարծում եմ, շատերի մոտ կա, եւ դու գտնում ես այն քաղաքական ուժը, որի հետ այդ արժեքներով կարող ես ճանապարհ գնալ»:

Հեղհեղուկ ու վտանգավոր

Երբ մարդը կանխատեսելի է, ունի հստակ սկզբունքներ ու չափանիշներ, ինչ-որ գաղափարների կրող է, հեշտ է նման մարդու հետ շփվելը, աշխատելը, քանի որ միշտ կարող ես կանխատեսել՝ ինչ կարող է նաեւ անել տարբեր իրավիճակներում, ինչ սպասել նրանից, ինչպես հետը հարաբերվել: Երբ մարդը չունի սկզբունքներ ու կարմիր գծեր, կարծիքն անընդհատ փոխում է, կայուն չէ, կանխատեսելի չէ, նրա հետ անտանելի է դառնում ապրելը եւ ընկերություն անելը, բայց հատկապես՝ նրա ղեկավարության ներքո աշխատելը: Ո՞վ կարող է թվարկել մի քանի սկզբունք ու չափանիշ, գաղափարական հենք, քաղաքական կողմնորոշում, որը կրում է Նիկոլ Փաշինյանը: Չկան այդպիսիք: Միայն այն մարդկանց երկար ցանկը, ում հետ նա այս տարիներին համագործակցել է, հետո՝ թիրախավորել, ում պաշտոն է տվել, ապա պաշտոնից զրկել, ում գովաբանել է, պարգեւատրել, հետո՝ մերժել, խոսում է այն մասին, որ մարդն անգամ իր համակրանքներում ու հակակրանքներում կայուն չէ: Մի բանում է կայուն՝ իշխանությունը պահելու հաստատակամության մեջ: Տեսեք՝ 2018-ին նա կոալիցիա կազմեց Գագիկ Ծառուկյանի եւ Դաշնակցության հետ, պաշտոններ տվեց նրանց, իսկ երբ ոտքը մի քիչ պնդացավ, կոալիցիան քանդեց, պաշտոնները ձեռքներից առավ ու ... սկսեց հալածել: Քրեական գործեր հարուցվեցին եւ Ծառուկյանի, եւ ՀՅԴ անդամների նկատմամբ: Մինչեւ 2020 թիվը Ալիեւին եւ հետխորհրդային լիդերներին արհամարհում էր, համարում ոչ ժողովրդավար, 20-ից հետո ռեւերանսներ է անում Ալիեւին, Էրդողանին, նաեւ՝ Պուտինին ուղղված, քանի որ իր «գահը» նաեւ նրանցից է կախված: Երբ հարմար էր, Գարեգին Բ-ի օրհնությունն էր խնդրում, հիմա հանկարծ պարզեց, որ կաթողիկոսն արժանի չէ Վեհափառի աթոռին, իսկ «Բենթլի Սամոն», որի դեմ հարյուրավոր հոդվածներ է տպագրել, պատվարժան մարդ է:

Դեռ տարեսկզբին լուրեր շրջանառվեցին, որ Արտակ Թովմասյանը պատրաստվում է «Դվին» հյուրանոցային համալիրում խաղատուն բացել: Օրենքը թույլ է տալիս խաղատուն բացել նաեւ Երեւանում՝ «40 միլիարդ դրամից ավելի ներդրումային ծրագրի շրջանակում»: Ինչպես հայտնի է, Երեւանում կազինո չկա, տարիներ առաջ դրանք տեղափոխվել են Երեւանից դուրս, սակայն օրենքը նման հնարավորություն տալիս է: Բայց Դվինի Արտակի բախտը չի բերել, պարզվում է՝ օրենքում սահմանափակում կա. խաղատան մոտակայքում եկեղեցի չպետք է լինի, խաղատան եւ եկեղեցու միջեւ հեռավորությունը պետք է լինի առնվազն 100 մետր, իսկ «Դվինը» Կոնդի եկեղեցուն է կպած: Ի դեպ, Աբովյան փողոցում կառուցվող հյուրանոցային համալիրում, որը պատկանում է Գագիկ Ծառուկյանին, շուտով խաղատուն կբացվի: Այս դեպքում՝ Սուրբ Աննա եկեղեցուց նորակառույց հյուրանոցը թույլատրելի հեռավորության վրա է:

ԵԹԵ ՎԵՐԸՆՏՐՎԵՆ, ՀԱՆՐԱՔՎԵԻ ԿԱՐԻՔ ԷԼ ՉԻ ԼԻՆԻ

Արդարադատության նախարար Սրբուհի Գալյանը նախօրեին հայտնել է, որ Սահմանադրության նոր տեքստը պատրաստ կլինի 26-ի մարտին. նման հանձնառություն ունի սահմանադրական փոփոխությունների խորհուրդը: Օրեր առաջ Փաշինյանը հայտարարեց, որ Սահմանադրության փոփոխության հանրաքվեն կլինի խորհրդարանի ընտրություններից հետո, իսկ ընտրությունը հնարավորություն կլինի, որ մասնակից ուժերը Սահմանադրության վերաբերյալ իրենց տեսակետներն արտահայտեն: Ավելի վաղ էլ ասել էր՝ մինչեւ 2026 թ. հունիսը սահմանադրական փոփոխությունների խորհրդում պետք է հաստատել նոր սահմանադրության հայեցակարգի նախագիծը, ապա այն ներկայացնել վարչապետի աշխատակազմ: Դրանից կես տարի անց՝ 26-ի դեկտեմբերին արդեն, ըստ իր ժամանակացույցի, պետք է հաստատվի նոր սահմանադրության նախագիծը, 27-ին կայանա սահմանադրական հանրաքվե: Մինչդեռ իշխող թիմում չեն բացառում, որ եթե խորհրդարանական ընտրություններում իրենք մեծամասնական մանդատ ստանան, հանրաքվեի անհրաժեշտություն էլ չառաջանա, եւ, ինչպես ՍԴ-ի հետ կապված փոփոխությունները խորհրդարանով անցկացրին, որի իրավունքը չունեին, նույնն էլ անեն նոր նախագծի հետ՝ հիմք ընդունելով այն փաստը, որ խորհրդարանական ընտրություններում ստացել են ժողովրդի մանդատը՝ դա անելու համար: Հենց այդ պատճառով է կարեւոր, որ մինչեւ ընտրություն Սահմանադրության հայեցակարգը դրվի շրջանառության մեջ, որ թուրք-ադրբեջանական պահանջն իրականացնելիս ոչ մի օր չկորցնեն:

ՀԱՅԿԱՅԻՆ

2018 ԹՎԱԿԱՆԻ ԻՇԽԱՆԱՓՈԽՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿ ԻՆՔՆ ԻՆՉ-ՈՐ ԿԱՊԱՎՈՐԻ ԴԵՐ Է ԿԱՏԱՐԵԼ ԳՈՐԾՈՂ ՎԱՐՉԱՊԵՏԻ ՀԱՄԱՐ

Դիվանագետ, պատմաբան, Լեւոն Տեր-Պետրոսյանի խորհրդական Ժիրայր Լիպարիտյանը վերջերս Հանրային հեռուստաընկերությանը տված հարցազրույցում ՔՊ-ականներից ավելի եռանդուն էր փաշինյանական թեզերը պաշտպանում: Այդ մասին զրուցել ենք քաղաքագետ **Ստեփան Դանիելյանի** հետ:

- Պետրոս Ղազարյանի հետ հարցազրույցի ժամանակ Լիպարիտյանի արտահայտած տեսակետները դրսեւորվել են նաեւ 1990-ականներին, թե՞ սրանք ամբողջովին նոր թեզեր են:

- Հանրապետության առաջին տարիներին դա եւս դրսեւորվել է, եւ ինքն ահագին բացասական դեր է կատարել շատ հարցերում, նաեւ՝ պատերազմի ժամանակ: Սակայն ամենաբացասական դերն այն է, որ որոշակի խմբի գաղափարախոսն է եղել, որոնք դարձան ՔՊ կորիզը: Այսինքն՝ սա իր մոտ խորքային, չգիտեմ ինչպես անվանել՝ գաղափար, թե պատվեր է, բայց ինքն ակնհայտորեն արտաքին ուժերին է սպասարկում եւ այդ քաղաքականությունն է առաջ տանում:

- Ինչպե՞ս էր դրսեւորվում նրա դերն այն ժամանակ:

- Ինքը միշտ այն տեսակետն ուներ, որ Արցախը պետք է մնա Ադրբեջանի կազմում. խոսքը 1990-ական թվականների մասին է: Արտաքին աշխարհաքաղաքական կենտրոնների համար նման տեսակետ ունեցող խմբակի գոյությունը հիմք հանդիսացավ, որ այդ խմբակին պետք է բերել իշխանության, մնացածն արդեն տեխնիկայի հարց է:

- Լիպարիտյանն այդ հայտարարություններով չի՞ արդարացնում դեռեւս երկու տարի առաջ Արցախում ցեղասպանություն իրագործած Ադրբեջանին, եւ կարո՞ղ ենք ասել, որ հայ ազգային շահերի դեմ նման գաղափարներով նա կանաչ լույս է վառում հետագայում ցեղասպանությունը կրկնվելու համար:

- Հարցի մեջ պնդումներ կան, որոնք միանշանակ չեն: Ի՞նչ է նշանակում ազգային շահ, ազգային շահի մասին գոյություն ունեն տարբեր պատկերացումներ: Այդ անձնավորության պատկերացումն այն է, որ այն, ինչ որ եղել է՝ ցեղասպանություն եւ այլն, դա անցած է, Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ տեղի ունեցած իրադարձություն է: Օսմանյան Թուրքիայում՝ ասորիների, հույների, եզդիների եւ այլ ժողովուրդների նկատմամբ, բալկանյան պատերազմի ժամանակ եւս էթնիկ զտումներ են եղել: Այսինքն, իր դիտարկմամբ, սա եղել է ընդհանուր երեւույթ, եւ, ընդհանրապես, Առաջին համաշխարհային պատերազմից առաջ էլ են նման երեւույթներ եղել, մասնավորապես՝ 19-րդ դարի կովկասյան պատերազմի ժամանակ եւ այլն: Նրա տեսակետն այն է, որ մենք դա պետք է մոռանանք, որ դա ինչ-որ էպիզոդ է, եւ այդ էպիզոդի վրա պետք չէ շեշտը դնել, պետք է Թուրքիայի եւ Ադրբեջանի հետ հարաբերություններ ստեղծել: Խնդիրն այն չէ, որ Թուրքիայի եւ Ադրբեջանի հետ պետք չէ հարաբերություններ ստեղծել, խնդիրն այն է, թե ինքը ո՞ր աշխարհաքաղաքական կենտրոնի պատվերն է կատարում, որովհետեւ հիմա ակնհայտ թուրքական աշխարհի գաղափարն է առաջ տարվում, որը դեռեւս 100 տարի առաջ նույնպես եղել է, եւ այդ գաղափարն ունեցել է նաեւ արտաքին՝ արտաքին ուժերին է սպասարկում եւ այդ քաղաքականությունն է առաջ տանում:

- Ինչպե՞ս էր դրսեւորվում նրա դերն այն ժամանակ:

- Ինքը միշտ այն տեսակետն ուներ, որ Արցախը պետք է մնա Ադրբեջանի կազմում. խոսքը 1990-ական թվականների մասին է: Արտաքին աշխարհաքաղաքական կենտրոնների համար նման տեսակետ ունեցող խմբակի գոյությունը հիմք հանդիսացավ, որ այդ խմբակին պետք է բերել իշխանության, մնացածն արդեն տեխնիկայի հարց է:

- Լիպարիտյանն այդ հայտարարություններով չի՞ արդարացնում դեռեւս երկու տարի առաջ Արցախում ցեղասպանություն իրագործած Ադրբեջանին, եւ կարո՞ղ ենք ասել, որ հայ ազգային շահերի դեմ նման գաղափարներով նա կանաչ լույս է վառում հետագայում ցեղասպանությունը կրկնվելու համար:

- Հարցի մեջ պնդումներ կան, որոնք միանշանակ չեն: Ի՞նչ է նշանակում ազգային շահ, ազգային շահի մասին գոյություն ունեն տարբեր պատկերացումներ: Այդ անձնավորության պատկերացումն այն է, որ այն, ինչ որ եղել է՝ ցեղասպանություն եւ այլն, դա անցած է, Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ տեղի ունեցած իրադարձություն է: Օսմանյան Թուրքիայում՝ ասորիների, հույների, եզդիների եւ այլ ժողովուրդների նկատմամբ, բալկանյան պատերազմի ժամանակ եւս էթնիկ զտումներ են եղել: Այսինքն, իր դիտարկմամբ, սա եղել է ընդհանուր երեւույթ, եւ, ընդհանրապես, Առաջին համաշխարհային պատերազմից առաջ էլ են նման երեւույթներ եղել, մասնավորապես՝ 19-րդ դարի կովկասյան պատերազմի ժամանակ եւ այլն: Նրա տեսակետն այն է, որ մենք դա պետք է մոռանանք, որ դա ինչ-որ էպիզոդ է, եւ այդ էպիզոդի վրա պետք չէ շեշտը դնել, պետք է Թուրքիայի եւ Ադրբեջանի հետ հարաբերություններ ստեղծել: Խնդիրն այն չէ, որ Թուրքիայի եւ Ադրբեջանի հետ պետք չէ հարաբերություններ ստեղծել, խնդիրն այն է, թե ինքը ո՞ր աշխարհաքաղաքական կենտրոնի պատվերն է կատարում, որովհետեւ հիմա ակնհայտ թուրքական աշխարհի գաղափարն է առաջ տարվում, որը դեռեւս 100 տարի առաջ նույնպես եղել է, եւ այդ գաղափարն ունեցել է նաեւ արտաքին՝ տարածաշրջանից դուրս պատվիրատուներ, որոնք աշխարհաքաղաքական խնդիրներ էին լուծում, ասենք, թուրքական աշխարհի միջոցով փորձում էին իրենց ազդեցությունը տարածել նաեւ այս ռեգիոնում, մինչեւ Կենտրոնական Ասիա: Հիմա հարցը հետեւյալն է. այդ մարդն ո՞ւմ շահերն է ներկայացնում, արդյո՞ք դա իր համոզմունքն է, թե՞ ինքը նաեւ ինչ-որ պատվեր է կատարում՝ տարածաշրջանից դուրս գտնվող ինչ-որ կենտրոնների: Հարցը դա է, եւ արդյո՞ք նույնիսկ 1990-ական թվականներին ինքը Հայաստանից դուրս ուժերի շահերը չի ներկայացրել:

- Ուզում եք ասել՝ օտար ուժերի կողմից ներդրվա՞ծ է եղել, կարո՞ղ ենք նման ենթադրություն մեզ թույլ տալ:

- Մենք նման կանխավարկած կարող ենք անել, որովհետեւ այդ մարդը շատ հստակ գիծ է տարել եւ այդ գիծը շարունակում է մինչեւ հիմա տանել: Եվ նույնիսկ շատ հետաքրքիր է՝ 2018 թվականի իշխանափոխության ժամանակ ինքն արդյո՞ք ինչ-որ կապավորի դեր է կատարել այս գործող վարչապետի համար:

- Բաքվից վերջերս վերադարձած ու Հիքմեթ Հաջիեւի ուղերձները հայ հանրությանը փոխանցող, իրենց հայ քաղհասարակություն անվանող անձանց գիծը չի՞ համընկնում արդյոք նրա գծի հետ:

- Ակնհայտորեն, նույն գիծն է գնում, եւ, ակնհայտորեն, սա այսօրվա Հայաստանի գործող իշխանության պատվերն է, այդ քաղաքական գիծն է, եւ, այո, Ձեր ասած անձնավորությունը եւ այդ մարդիկ իշխող ուժի պատվերն են իրականացնում: Իսկ իշխող ուժի պատվերը նույնպես ունի աշխարհաքաղաքական տրամաբանություն եւ կարելի է ասել՝ պատվիրատուներ:

- Իսկ այդ պատվիրատուների հետեւից աշխարհաքաղաքական ո՞ր ուժի «ականջներն» են երեւում, ո՞ւր են տանում թելերը:

- Առաջին հերթին ձգվում են Թուրքիա, Մեծ Բրիտանիա, եւ, իհարկե, Միացյալ Նահանգներում կան որոշ ուժեր, որոնք նույնպես այս գծի մեջ են, բայց դա չի նշանակում, որ ընդհանրապես Միացյալ Նահանգների քաղաքականությունն է: Բայց այդ քաղաքականությունը, ըստ տարբեր նախագահների գծի, ակնհայտորեն բրիտանական եւ թուրքական շահերն է ներկայացնում, որոնք չեն թաքցնում այդ երկրների պետական պաշտոնյաները իրենց հրապարակային հայտարարություններում, շատ ազդեցիկ թինգ-թանգերում, որտեղ բացահայտ այդ մասին խոսում են, որեւէ գաղտնիք չկա:

- Ճի՞շտ եմ հասկանում, որ հիմա փորձում են հայ ժողովրդի հոգեբանությունը փոխել, մեզ վերածել մի զանգվածի, որը ցնծությամբ կընդունի թշնամուն... մեզ դեպի այդ մոդելն են տանում:

- Հայաստանն առաջին երկիրը չէ, որտեղ ինքնության փոփոխության միջոցով նաեւ աշխարհաքաղաքական փոփոխություններին են փորձում հարմարեցնել: Նման դեպքեր շատ են եղել, եւ դա նաեւ հատուկ ծառայությունների աշխատանքն է, եւ իրենց դրա մեջ պետք չէ մեղադրել՝ դա միշտ եղել է եւ լինելու է: Հարցն այն է, թե մենք, որպես պետություն, որպես երկիր, չունենք իմունիտետ, չունենք այդ մտքի կենտրոնները, եւ կյանքը ցույց տվեց, որ հատուկ ծառայություններ Հայաստանը չունի եւ չուներ մինչ 2018 թվականը, Հայաստանը չունի պետական իմունիտետ, կայացած հատուկ ծառայություններ, համակարգված քաղաքական համակարգ, նաեւ՝ մտքի կենտրոններ: Իսկ վիճակն այսօր ավելի ծանր է:

Հայկա ԱԼՈՅԱՆ

«ԱՐՑԱԽԻ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴ» ԵՎ «ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆՅԱՆ»՝ ԱՆՀԱՄԱՏԵՂԵԼԻ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՆ

Երեկ Նիկոլ Փաշինյանը կարողացավ քահանաներից բացի նաեւ սրբազանների իր կողմը տանել: Հայտնի չէ, թե ինչ ճնշումների եւ հարկադրանքի հիման վրա մի խումբ սրբազաններ ստորագրել են մի հայտարարություն՝ ընդդեմ Վեհափառի եւ Արշակ սրբազանի, ապա գնացել են նրա հետ հանդիպման: Նրանց թվում են Աբրահամ արքեպիսկոպոս Մկրտչյանը, Առաքել արքեպիսկոպոս Քարամյանը, Վազգեն արքեպիսկոպոս Միրզախանյանը, Անուշավան եպիսկոպոս Ժամկոչյանը, Վրթանես եպիսկոպոս Աբրահամյանը, Նավասարդ արքեպիսկոպոս Կճոյանը, Արտակ եպիսկոպոս Տիգրանյանը, Գեւորգ եպիսկոպոս Սարոյանը:

Փաշինյանը շնորհակալություն է հայտնել սրբազաններին՝ նրանց «սկզբունքային դիրքորոշման համար», եւ փիլիսոփայել. «Ես կարծում եմ, որ այն թեման, որ արծարծել եք դուք, անձնավորվածի միջոցով մենք շատ կարեւոր մի ընդհանրական օրակարգի հետ ենք առնչվում»: Ապա ասել է, որ պետության եւ հասարակության արժեքահեն լինելը կապված է նաեւ հոգեւոր կյանքի հետ: «Ես կարդացել եմ ձեր հայտարարությունը հենց այդ դիտանկյունից, ես համենայնդեպս տեսել եմ արտահայտությունը նույն կարգի մտահոգության»:

Այդ կադրերից հետո ողջ համացանցը լի էր դատապարտման խոսքերով, շատերը հիշեցնում էին, թե ովքեր են Նիկոլ Փաշինյանի կողմն անցած սրբազանները, եւ ներկայացնում նրանց մեղքերը, որոնք շատ ավելին էին, քան կարելի է պատկերացնել, եւ կուսակրոնության խախտումների բազմաթիվ ապացույցներ էին հրապարակվում: Մարդիկ հիշել էին Նավասարդ Կճոյանի օֆշորի սկանդալն ու «Բենթլին» եւ արձանագրում էին, որ այս անձանց միջոցով Նիկոլ Փաշինյանը ոչ թե մաքրում է Եկեղեցին եւ նրա կանոնագրքի պահպանության հարցն է լուծում, այլ ուղղակի պառակտում է Հայ առաքելական եկեղեցին: Եվ քանի որ Եկեղեցին մեր ազգի հիմնասյուներից է, եւ մեզ պահող շատ բան է խարխլել Փաշինյանը, ուստի որոշակի շրջանակներում այս ամենի շուրջ նաեւ հուսահատության ալիք է բարձրացել:

Իրավապաշտպան **Ռուբեն Մելիքյանը**, «Հրապարակի» հետ զրույցում անդրադառնալով տեղի ունեցածին եւ դրա հետեւանքներին, նկատում է. «Հուսահատության պատճառ չկա: Այն, որ Նիկոլին հաջողվելու էր ստանալ նման պատկեր, ձեռքսեղմումներ, դա ինձ չզարմացրեց, այդ ամենի հավանականությունը մեծ էր, քանի որ գործի էր դրվել պետական ողջ ապարատը՝ քրեական գործեր կարող քննչական ապարատը, գաղտնի ծառայությունները, տեղեկատվական բլոկը եւ այլն: Ողջ պետական ապարատը լծված է ազգային եկեղեցու դեմ պայքարում, եւ այս ամենը ինձ չի զարմացնում: Կարեւոր է, որ մենք գիտակցենք՝ եպիսկոպոսաց դասի մարմիններն այն իրավասու մարմինները չեն, որ կարողանան Եկեղեցու վերաբերյալ որոշումներ կայացնել: Երկու կառույց ունենք, որոնք հիմնական որոշումներ կայացնողներն են՝ Ազգային եկեղեցական ժողովը, որը բաղկացած է հոգեւորականներից եւ աշխարհականներից, երկրորդն էլ անձամբ Ամենայն հայոց կաթողիկոսն է: Իմ պատկերացմամբ՝ Եկեղեցուն հավատարմության խոսք ասողները շատ ավելին են: Համացանցում ես ընթերցում եմ մի շարք նման տեքստեր՝ հատկապես քահանաների կողմից, ինչը շատ ողջունելի եւ ոգեւորիչ է: Այն ՔՊ-ական մոտեցումը, որ այս ամենով հարցեր են լուծվում, չի համապատասխանում իրականությանը: Այո, մենք տեսանք մարդկանց, ովքեր, մեղմ ասած, շատ սխալ քայլեր արեցին, բայց ես չեմ համարում, որ այս քայլով Նիկոլն իր խնդիրը լուծեց: Ես հատուկ ուզում եմ անդրադառնալ Արցախի թեմի առաջնորդին, չեմ կարող ասել, թե նա ինչից էր այդքան վախեցել, սակայն եթե ես չստանամ տեղեկություն, որ այդ մարդուն եկել տարել ու ինչ-որ նյութեր են ներարկել, նոր միայն այդտեղ նստացրել, ապա մենք գործ ունենք շատ ավելի վատ երեւույթի հետ, քան դավաճանությունն է: Ես ինձ կարող եմ այս արտահայտությունը թույլ տալ, որովհետեւ «Արցախի թեմի առաջնորդ» եւ «Նիկոլ Փաշինյան» հասկացություններն անգամ նույն նախադասության մեջ չեն տեղավորվում, էլ ուր մնաց՝ դեմ-դիմաց նստեն ու ինչ-որ հարցեր քննարկեն: Ես չեմ բացառում, որ Նիկոլը կարող է քանդել Եկեղեցին, սակայն չեմ ուզում վիճաբանություն առաջացնել: Հիմա հուսահատվելու ժամանակը չէ, ես դրան էլ եմ դեմ: Հույսս այն է, որ մեր Եկեղեցում առողջ ուժերը գերակայում են: Հավատացյալների աչքով՝ Աստծո գործերն անքննելի են: Հույսն Աստծո ողորմածության վրա պետք է դնել»:

Հայկ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՀԱԿ

ԳԼԽԱՎՈՐ ԽՆԴԻՐԸ ԱՂԵՏԱԲԵՐ ՈՒԺԻ ՀԵՌԱՑՈՒՄՆ Է, ԲԱՅՑ ՄԵՐ ՔԱՅԼԵՐՈՎ ԿԱՐԾԵՍ ՆՊԱՍՏՈՒՄ ԵՆՔ ԴՐԱ ՄՆԱԼՈՒՆ

Քաղաքական ուժերն ու տարբեր գործիչներ այս օրերին արդեն 2026 թվականի ընտրություններին մասնակցելու հայտեր են ներկայացնում, ինքնառաջադրման հայտարարություններ անում: Ամենամեծ ընդդիմադիր ուժերը նախկին նախագահներ Ռոբերտ Քոչարյանի եւ Սերժ Սարգսյանի թիմերն են: Օրերս նախկին ՄԻՊ Արման Թաթոյանը նրանց ուղղված կոչ հնչեցրեց՝ հորդորելով հրաժարվել ընտրություններին մասնակցելու գաղափարից, որ Նիկոլ Փաշինյանը չվերարտադրվի, միաժամանակ առաջադրելով ինքն իրեն՝ նորաստեղծ «Միասնության թեւեր» նախաձեռնությամբ: Ընդդիմադիրներն այս առաջարկը քննադատաբար են ընդունել, այդ թվում՝ Հայ ազգային կոնգրեսը, որի վարչության անդամ **Արմեն Խաչատրյանը** կարծում է, որ Թաթոյանը լավագույն դեպքում 4 տոկոսանոց ընդդիմություն է լինելու, եւ նրա կոչն ուղղակի բերելու է ձայների փոշիացման: Նրան մի քանի հարց ենք ուղղել:

- Կարծում եք՝ հնարավոր չէ՞ պատկերացնել մի իրավիճակ, երբ Արման Թաթոյանն իշխանությունից հեռացնում է Նիկոլ Փաշինյանին:

- Որքան էլ Փաշինյանի էլեկտորալ ռեյտինգը, իմ գնահատմամբ, ծայրահեղ ցածր գոտում է գտնում, այնուամենայնիվ, երկրորդ տեղում իր հետեւից գնացող ուժն այս պահին չի կարող հավակնել ընտրություններում միայնակ հաղթելու կամ Փաշինյանին իշխանությունից հեռացնելու: Այդ հայտն այսօր ներկայացնել ու ասել, որ ես այն ուժն եմ, որ կարող եմ Փաշինյանին հեռացնել իշխանությունից, մի քիչ, ամեն դեպքում, հավանական չեմ համարում: Կարծում եմ, որ պետք է քաղաքական ուժերի այնպիսի վերադասավորումներ, այնպիսի կոնսոլիդացված հայտ լինի, ես չեմ ասում՝ մի ուժի, այլ՝ երկու, երեք ուժի, որոնք հնարավորություն կտան ընտրողներին՝ 2026 թվականին գնալ ընտրության:

- Գուցե հենց Թաթոյանն է այն ուժը, որը կարող է կոնսոլիդացնել այդ երեք-չորս ուժին:

- Եթե Թաթոյանն այդ հայտարարությանը զուգահեռ հույս տար, որ իր հայտն այնքան հզոր է, որ նա կարող է համաժողովրդական շարժում սկսել, քաղաքական ակտիվ մթնոլորտ ստեղծել, որ անտարբեր զանգվածը, որն էական զանգված է, դուրս գա, գնա քվեախցիկ ու քվեարկի, այդ զանգվածն ուզենա բան փոխել, գուցեեւ ես էլ համաձայնեի այդ առաջարկին՝ որպես ընտրող, որպես քաղաքացի, ոչ թե որպես քաղաքական շահագրգիռ անձ: Բայց այս պայմաններում ես տեսնում եմ, որ Թաթոյանն էլեկտորալ ռեյտինգի առումով այն ուժերի թվում է, որոնք միայնակ անգամ անցողիկ շեմը հաղթահարելու խնդիր կունենան: Այս անտարբերության, ապատիայի, հուսալքության, առանձին ընտրության գնալու պարագայում արդեն ասացի, թե ով կարող է լինել այդ ուժը, թե ում կգնան այդ փոշիացված ձայները: Այսօր խոսակցության թեման ու առարկան պետք է լիներ այն ռազմավարության մշակումը, որը կարող է բերել փոփոխության, ոչ թե՝ դուք բոլորդ պայմաններ ստեղծեք, որպեսզի ես կարողանամ այդ փոփոխությունն անել: Դա անհնար է միայնակ ուժերի համար եւ վտանգավոր: Հերիք չէ՝ իրենք չեն կարողանալու այդ համազգային բռնկումը, շարժումն առաջացնել, մի հատ էլ փորձում են ավելի թուլացնել, ոչ մրցունակ վիճակում դնել այն ուժերին, որոնք կարող են գնալ, մտնել պայքարի մեջ:

- Կարծում եք, որ Սերժ Սարգսյանն ու Քոչարյանը Թաթոյանից բարձր ռեյտինգ ու հաղթելու շանս ունեն:

- Ես չեմ գնահատի, թե ով ավելի շանս ունի: Եթե մենք ապրեինք նորմալ, ստանդարտ պայմաններում, շատ բնական կլիներ, որ ամեն մի քաղաքական ուժ իր քվեն ստանար, ու դրա արդյունքում որոշվեր նրա կապված պետության, քաղաքացիների համար բնականորեն ստեղծված վիճակում մենակ գնալու, կոնսոլիդացիա չստեղծելու պարագայում նա կամ հավաքելու է 4 տոկոս, ինչի համար Նիկոլ Փաշինյանն իրեն շնորհակալ կլինի ու ավելի շատ շնորհակալ կլինի, եթե հանկարծ 4 տոկոսը չհավաքի եւ իր ձայները նվիրի ավելի շատ ձայն հավաքած ուժերին: Այս պարագայում ջլատված, առանձին-ներկայացվածությունը: Ի վերջո, մենք պետք է հասնենք նրան, որ սա լինի սովորական պրակտիկա: Մանավանդ եթե, օրինակ, Սահմանադրության հիմար դրույթը՝ կայուն մեծամասնության վերաբերյալ, վերացնենք, ունենանք կիսանախագահական համակարգ, որտեղ երկու առաջնային մանդատով օժտված մարմիններ են լինելու, որոնք իրար հակակշռելու են, եւ պետության կառավարման ճգնաժամերը կախված չեն լինելու քվեարկության ընթացքից: Ցավոք, մենք չենք գտնվում բնականոն իրավիճակում, որտեղ խնդիրն օրենսդիր մարմնի ձեւավորումն է՝ քաղաքական մշակույթի եղած ստանդարտներին համապատասխան: Բայց մենք մի իրավիճակում ենք, երբ որ բոլոր ընդդիմադիր ուժերն արձանագրում են, որ իշխանության վերարտադրության դեպքում ունենալու ենք շատ ավելի մեծ աղետներ, շարունակվելու է այս աղետալի պատմական ընթացքը, որի մեջ ենք այս պահին, ու գլխավոր խնդիրը դնում ենք աղետաբեր ուժին իշխանությունից հեռացնելը: Բայց միեւնույն ժամանակ մեր գործողություններով ոնց որ թե նպաստում ենք, որ այդ ուժը վերարտադրվի ու շարունակի իր այս ընթացքը:

- Մի քանի օր առաջ, ՀԱԿ նախաձեռնությամբ, տարբեր քաղաքական ուժերով հաղորդում էիք ներկայացրել դատախազություն՝ պահանջելով պատասխանատվության կանչել Փաշինյանին՝ Եկեղեցու դեմ կոնկրետ հանցանատվության կանչել Փաշինյանին՝ գործություններ կատարելու համար: Ի՞նչ եղավ դրա ընթացքը:

- Այժմ այն տեխնիկական, քրեադատավարական ընթացքում է, պատշաճ հաղորդման տեսք պետք է ստանա, այդ աշխատանքն ենք անում, կից փաստաթղթերն ենք հավաքում, մարդիկ ստորագրել են, միացել են, ու եթե ոչ այսօր, ապա վաղը դա փոստով կուղարկվի Գլխավոր դատախազություն:

Սյուզան ՍԻՄՈՆՅԱՆ
syuzan.simonyan@hraparak.am

ԵՍ ՉԵՄ ՀԱՎԱՏՈՒՄ, ՈՐ ՈՐԵՎԷ ՍՐԲԱԶԱՆ ՀԱՅՐ ԿԱՐՈՂԱՆԱ ԳՆԱԼ ԻՐ ԽՂՃԻՆ ԴԵՄ

Հարցազրույց իշխող խմբակցության պատգամավոր **Սերգեյ Բագրատյանի** հետ

- Գիտեմ, որ դիմել եք՝ ՔՊ-ին անդամակցելու համար, բայց Ձեզ դեռեւս չեն ընդունել կուսակցության շարքերը, հնարավոր է մերժվեք:

- Ես նոր եմ դիմել, վարչության նիստում պետք է որոշում ընդունեն, չեմ կարող ոչինչ ասել՝ կընդունեն, թե ոչ: Ես աշխատել եմ այս տարիներին, եւ ժողովուրդն է դա տեսել, եւ քաղաքական ուժը, եթե նպատակահարմար կհամարեն...

- Պարոն Բագրատյան, գուցե ուզում եք պատգամավոր դառնալ, բայց քանի որ վստահ չեք, որ ցուցակի անցողիկ տեղերում կհայտնվեք, ուստի որոշել եք փոքր-ինչ շահած դուրս գալ եւ կուսակցական եք դառնում, որ ոչ թե մեկուկես, այլ կես միլիոն դրամ վճարեք: Կամ էլ՝ գուցե մտածում եք, որ կուսակցական դառնալուց հետո Ձեր շանսերն ավելի կմեծանան:

- Չեմ կարծում, որ դա լուրջ խոսակցություն է:

- Իսկ լո՞ւրջ է, որ պատգամավորի թեկնածու դառնալու համար պետք է գումար մուծվեք: Դա իրավական, անգամ բարոյական հարթության մեջ չի տեղավորվում:

- Ընդհանրապես, նման նվիրատվությունների, անդամավճարների ինստիտուտը չի կարող օրենսդրորեն հիմնավորված չլինի:

- Այո, օրենքը նվիրատվությունների եւ անդամավճարների մասին է սահմանում, բայց ոչ առաջադրման համար մուծվող «լեւի» փողի, որը կարծես մանդատի գինը լինի:

- Դա նույնպես ձեւակերպվում է օրինական եւ մուտք է արվում նախընտրական հիմնադրամում, եւ ծախսերն էլ ներկայացվում են հասարակությանը, թե ինչպես է ծախվել:

- Ենթադրվում է, որ ամբողջովին համաձայն եք ՔՊ գաղափարախոսություններին, քաղաքականությանը...

- Ես նշեցի, որ այն արժեքները, որոնք դավանել եմ եւ դավանում եմ՝ ազատություն, մրցակցություն, հավասարություն, պետության նկատմամբ վերաբերմունքը, հնարավորի քաղաքականությունը եւ այլն, արժեհամակարգեր են, որ յուրաքանչյուրս տարբեր է դիտարկում, բայց ինձ համար հոգեհարազատ ճանապարհ է:

- Իշխանության՝ Եկեղեցու նկատմամբ քաղաքականությունն Ի՞նչ է Ձեզ համար հոգեհարազատ, այս «խաչակրաց արշավանքները»:

- Պետությունից հետո համար մեկ արժեքն ինձ համար Հայ առաքելական սուրբ եկեղեցին է: Այն պրոցեսները, որ Դուք նկարագրում եք, կապ չունի եկեղեցու հետ, հոգեւոր արժեքների աղճատումը կարող է հիվանդացնել եւ ինձ, եւ ձեզ, եւ դա պետք է լինի թափանցիկ, տեսանելի, որպեսզի հայ մարդն ընդունի դա, եթե հայ մարդը չի ընդունում, ընդհանուր չեն ընդունում, ուրեմն խնդիր կա: Հոգեւորականների վարքի հետ կապված շատ խնդիրներ ուղղակի պարզ, թափանցիկ է պետք ներկայացվեն:

- Լավ կլինի՝ քաղաքական իշխանությունն իր վարքով զբաղվի, հատկապես որ Սահմանադրությունը թույլ չի տալիս միջամտել եկեղեցու գործունեությանը: Այլ ոչ թե ԱԱԾ-ի միջոցով ինչ-ինչ կոմպրոմատներով սրբազաններին իր կողմը բերի եւ եկեղեցին փորձի ներսից քանդել:

- Տեսեք, որոշ եպիսկոպոսներ իրենց անհամաձայնությունն արտահայտեցին, կարծեմ՝ 9 հոգի, եթե չեմ սխալվում՝ 20 հոգուց է բաղկացած տվյալ մարմինը: Այսինքն, սա նույնպես ցույց է տալիս, որ ներսում էլ կա դժգոհություն: Ես չեմ հավատում, որ որեւէ սրբազան հայր կարողանա գնալ իր խղճին դեմ, հետեւաբար, այս իրավիճակը մտածելու տեղիք է տալիս:

- Ձեր թիմակից պատգամավորներն են անգամ հրապարակավ խոստովանում, որ ԱԱԾ-ն աշխատում է հոգեւորականների վրա...

- Իրենց կրթական մակարդակը շատ բարձր է, չեմ հավատում, որ ԱԱԾ-ն կարողանա չեղած բան իրենց համոզել, իսկ եթե եղած բան կա, լավ կլինի՝ բոլորս էլ իմանանք այդ մասին:

- Իշխանությունն ուզում է հեռացնել մի քանի պինդ հոգեւորականի, Դուք, ինչ է, չգիտե՞ք Կճոյանի, Քյարամյանի հոր՝ Առաքել եպիսկոպոսի եւ մյուսների մասին, որոնցով հիմա փորձում եք իբր նորոգել եկեղեցին:

- Իհարկե՝ ոչ, իրենց միջոցով չենք անում, մենք ասում ենք, որ եկեղեցին՝ ինքը պետք է գնահատական տա, եկեղեցականները պետք է իրենք գնահատական տան, այդ իմաստով վստահ եմ, որ ճնշման տակ չեն կարող «ցուցմունքներ» տալ: Ես կարդացի, որ այդ հոգեւորականներն ավելի վաղ ներկայացրել են իրենց դիրքորոշումը՝ Արշակի հետ կապված, ու սպասել, որ դիրքորոշում կայացվի, երբ չի կայացվել, նոր մտել են այս հարաբերության մեջ:

- Ձեր խնդիրն Արշակ սրբազա՞ն է կամ որեւէ այլ անձ...

- Ես բոլորի դեպքում եմ պատրաստ լսել, եթե խախտել են կուսակրոնության ուխտը, ուրեմն պետք է չշարունակեն, դա չի նշանակում հանցագործություն, դա նշանակում է, որ ընդունելի չէ:

- Չե՞ք կարծում, որ այս ճղճիմ թեմայով քանդում եք եկեղեցին՝ որպես ինստիտուտ, կամ առնվազն վնասում:

- Աստված չանի, որ մենք կառույցին վնաս տանք:

Լուսինե ՇԱՀՎԵՐԴՅԱՆ
lusine.shahverdyan@hraparak.am

ԵԿԵՂԵՑԻ ՎՃՌՆԵՐԸ

ՆԻԿՈԼԸ ԿԱՐՈՂ Է ՀԱՆԳԻՍՏ ԱՍԵԼ՝ ԷՍ ՉԻՄ ՁԵՐ ՄՏԱՎՈՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ, ՀՈԳԵՎՈՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Մայր Աթոռի դիվանապետ Արշակ արքեպիսկոպոս Խաչատրյանը Նիկոլ Փաշինյանի թիրախում հայտնվեց իր հայտնի ելույթից հետո՝ Ծիծեռնակաբերդում, որտեղ նզովեց ցեղասպանության զոհերին ու այդ փաստն ուրացողներին, Փաշինյանը, փաստորեն, դա իր վրա վերցրեց: Մայիսից Եկեղեցու դեմ սկսված արշավը պայմանավորված էր ոչ միայն Շվեյցարիայում Մայր Աթոռի կազմակերպած համաժողովով՝ արցախցիների թեմայով, այլ նաեւ Մայր Աթոռի ու անհատ հոգեւորականների հակաՔՊ-ական գործունեությամբ: Այդ արշավը սկսվեց հոգեւոր շինությունները չուլան անվանելուց, հետո ինքնատիրապետումը կորցրած վարչապետը գրեց. «Սրբազան, գնա քեռակնոջդ դոմփի», կաթողիկոսին հրավիրեց իր թլպատված չլինելն ապացուցելու եւ այլ անպարկեշտ հայտարարություններ արեց: Ապա դաշտ նետվեցին Արշակ սրբազանի մասին կեղտոտ տեսանյութեր, նրա նկատմամբ քրեական վարույթներ հարուցվեցին, ընդհուպ մինչեւ Գարեգին Ա կաթողիկոսին սպանելու մեղադրանքով՝ կառուցված կարգալույծ քահանաների տեղեկությունների վրա: Մարդուն գաղտնի տեսանկարահանելու, նրա անձնական կյանք ներխուժելու փաստի առիթով Քննչական կոմիտեն ստիպված էր գործ հարուցել, բայց փորձում են ներկայացնել, թե տեսանյութերն իրական են, եւ, ըստ այդմ՝ Սրբազանը խախտել է կուսակրոնության ուխտը: Եզրակացությունը, ըստ նիկոլական սրբազանների եւ իշխանական լրատվամիջոցների, հաստատել է տեսանյութերի իսկությունը, չնայած փաստաբան Արսեն Բաբայանն ասում է, որ այդ եզրակացությունն առաջին հերթին կողմին պետք է ուղարկվեր, այլ ոչ թե օտար մարդկանց տրամադրվեր: Ըստ 9 սրբազանների հայտարարության, Ամենայն հայոց կաթողիկոսն «առոչինչ է համարել այն»՝ կոծկելով Արշակ սրբազանի «սրբապիղծ վարքը»: Հայտարարությունը ստորագրած 9 եպիսկոպոսները նախօրեին դատապարտել էին կաթողիկոսի որոշումը եւ պահանջում էին «վերականգնել Հայ առաքելական եկեղեցու սուրբ անունը»: Իսկ նախօրեին նշված եպիսկոպոսներից 8-ը ներկայացել էին կառավարություն՝ Նիկոլ Փաշինյանի հետ հանդիպման, ինչը եւս մեկ անգամ ապացուցեց, որ այս գործընթացը կառավարվում է նրա կողմից, ուղղված է հայոց եկեղեցին քանդելուն, եւ նա արդեն կարողացել է պառակտել Եկեղեցու վերնախավն ու իր կողմը գրավել ինչ-որ հոգեւորականների:

Հասարակական-քաղաքական գործիչ **Նաիրա Զոհրաբյանը**, «Հրապարակի» հետ զրույցում անդրադառնալով թեմային, ասում է. «Այդ հայտարարությունը տարածվել է ՔՊ-ական էջերով եւ իշխանական լրատվամիջոցներով: Որեւէ պաշտոնական հաստատում այդ հայտարարության մասին չի եղել: Արշակ սրբազանը հայտարարել է, որ երբ այդ ստորագրության հեղինակները հաստատեն, որ իրենք ստորագրել են, եւ խոսեն այդ մասին, այդ ժամանակ էլ ինքը կմեկնաբանի այն: Ակնհայտ է, որ ստորագրողներին ստիպել են, պարտադրել, որպեսզի ստորագրեն դրա տակ: Ես կարծում եմ, որ ստորագրությունները չեն կեղծվել, դրանք իրական են, ավելի քան վստահ եմ, որ դրանց տակ ստորագրողներն իրենց բջջային հեռախոսներն անջատել են ու ընդհատակ անցել: Ո՛չ Կճոյանը, ո՛չ մյուսները դուրս չեն գալու կապի, ինչը հաստատում է իմ այն պնդումները, որ ստորագրողները ճնշումների են ենթարկվել: Մեկին կոմպրոմատներով են վախեցրել, մյուսին՝ քրեական գործերի ուրվականներով: Մարդկանց ճնշել են, որ ստորագրեն այդ փաստաթղթի տակ: Նիկոլ Փաշինյանն ամիսներ առաջ որոշել էր Վեհարանը վերցնել՝ բլից կրիգով, սակայն հասկանալով, որ դա հնարավոր չէ, հիմա անցել է պլան Բ-ին՝ Եկեղեցին ներսից քանդելով իր նպատակները կատարելու գործին: Ցավոք, Նիկոլին առ այս պահը հաջողվում է անել իր ուզածը: Նրան հաջողվում է գտնել հոգեւորականներ, ովքեր տարբեր ճնշումների ազդեցությամբ կատարում են իր հրամանները: Մեկին, հավանաբար, ինչ-որ մեկի կնոջ հետ սիրային կապի համար են շանտաժի ենթարկել, իսկ այ, օրինակ, Կճոյանին՝ օֆշորային քրեական գործերի հետ կապված պատմությամբ: Մարդիկ չեն դիմանում առերեսումներին եւ համալրում են ՔՊ-ականների շարքերը: Նիկոլը դարձավ այն լակմուսի թուղթը, որը պատռեց շատերի դիմակը: 2018-ից հետո մենք տեսանք, որ այն մարդիկ, որոնց մենք այս տարիներին համարել ենք մտավորական, իրականում մտավորական չեն, որ մենք չունենք էլիտա, մերը անտիէլիտան է, եւ նրանց հեշտությամբ կարելի է ուղղակի գնել, անազնիվ պայմանավորվածություններ ձեռք բերել եւ այլն: Նիկոլը հանդիսացավ այն կերպարը, որը կարող է հանգիստ ասել՝ էս չի՞ ձեր մտավորականությունը: Էս չի՞ ձեր հոգեւորականությունը: Գեւորգ սրբազանի բուժման ողջ ծախսերը Գերմանիայում հոգացել է Վեհափառը, եւ տեսեք, թե ինչ է լինում: Այս ամենից հետո Նիկոլն ունի իրավունք ասելու՝ էս չե՞ք դուք: Մենք ունենք ստեղծագործական միություններ, ամեն մեկը՝ կենտրոնի մի շքեղ շենքում: Որտե՞ղ են այդ միությունների ղեկավարները, անդամները: Ամեն մեկը տեղավորվել է մի տեղ, եւ այդ ստեղծագործական միությունների սենյակների 90 տոկոսն էլ տալիս են վարձով ու առոք-փառոք ապրում: Լսո՞ւմ ենք նրանց ձայները՝ չէ: Բոլորն իրենց կոմֆորտ զոնայի մեջ են եւ չեն ցանկանում, ինչպես իրենք են ասում, զբաղվել քաղաքականությամբ: Բարոյական անկում է մեզանում: Նիկոլը նաեւ ցույց տվեց մեր բարոյական դեֆոլտը՝ բոլոր առումներով: Հասկանում եմ, որ գուցե ինձ կարող են հակադարձել ու ասել, որ շատերի դեմ կոմպրոմատներ ունեն, եւ շատերը վախենում են ու չեն դիմանում ճնշումներին, բայց դա ինձ համար արդարացում չէ»:

Էջը՝ Հայկ ԳԵՎՈՐԳՅԱՆԻ

ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՆ, ՈՐՈՆՔ ՆԵՐԴՐՎՈՒՄ ԵՆ ՁԱՅՆԵՐ ՓՈՇԻԱՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Նախկին ՄԻՊ, «Միասնության թեւեր» նախաձեռնության ղեկավար Արման Թաթոյանն իր ասուլիսում տարբեր հայտարարություններ արեց, որոնք մեծ աղմուկ բարձրացրին: Օրինակ, նա ասել էր. «Ես լինեմ վարչապետ, մի պաշտոնյա քաղաքացու հանդեպ վատ պահի, վիզը կկտրեմ»: Ոմանք կարծում են, որ այս հայտարարությունը սազական չէ իրավապաշտպան գործունեություն ծավալած անձին եւ մանիպուլյատիվ է՝ «նիկոլական» ոճով: Նա ասել էր նաեւ, որ առաջիկա ընտրություններին նախկին նախագահները չպետք է մասնակցեն, քանի որ խանգարում են Նիկոլ Փաշինյանին հեռացնելու գործին: Ընդդիմադիր ուժերն այս հայտարարությունը քննադատեցին եւ տարակուսանք հայտնեցին, թե դեռ պարզ չէ՝ ինքը կարո՞ղ է հաղթահարել անցողիկ շեմը: Զրուցել ենք քաղտեխնոլոգ **Արմեն Բաղալյանի** հետ:

- Շատերին բարկացրել են Թաթոյանի հայտարարությունները, ասում են՝ նա Փաշինյանի խոսույթն է կրկնում: Ձեր կարծիքով՝ ճի՞շտ է նման բառապաշարով քաղաքական հայտ ներկայացնելը:

- Զարմանալ պետք չէ, որ տարբեր քաղաքական ուժեր արդեն իսկ տվել են նախընտրական կամպանիայի մեկնարկը: Չշփոթենք այն ընտրական կամպանիայի հետ, այն լինում է այն ժամանակ, երբ ԿԸՀ-ն սկսում է մասնակիցների գրանցման պրոցեսը: 7-8 ամիս է մնացել պառլամենտական ընտրություններին, եւ շատ նորմալ է, որ քաղաքական ուժերը հայտեր են ներկայացնում: Ինչ վերաբերում է Թաթոյանի այն հայտարարությանը, որ նախկին նախագահները պետք է ասպարեզից հեռանան եւ իրեն հաղթանակի հնարավորություն տան, ապա ասեմ, որ ցանկացած քաղաքական գործիչ, բնականաբար, ունի իրավունք՝ դիրքորոշում հայտնելու, եթե այն որեւէ օրենք չի խախտում: Արման Թաթոյանն արդեն իսկ քաղաքական գործիչ է եւ ունի իրավունք՝ նման հայտարարություններ անելու, բայց այստեղ կա մեկ «բայց». եթե նման բան տեղի ունենա, եւ նախկին նախագահները դուրս գան ասպարեզից, դրանից Արման Թաթոյանը որեւէ կերպ չի շահելու: Հայաստանում կա սխալ պատկերացում, այն է՝ կա ընդդիմադիր դաշտ, կան ընտրողներ, եւ եթե իքս ու իգրեկ ուժերը հեռանան, ապա երրորդ ընդդիմադիր թեկնածուն՝ զեթը, կստանա մյուս երկուսի քվեները: Ոչ, ընկերներ, այդպես չէ: Գոյություն չունի «ընդդիմադիր ընտրազանգված» հասկացություն: Այնպես չէ, որ նրանք, ովքեր քվեարկելու են Ռոբերտ Քոչարյանին կամ Սերժ Սարգսյանին, նրանց բացակայության դեպքում քվեարկելու են Թաթոյանի օգտին: Ինչ վերաբերում է Թաթոյանի՝ վիզ կտրելու մասին հայտարարությանը, ապա ասեմ, որ երբ մարդ մտնում է քաղաքականություն, մոռանում է իր նախկին բոլոր աշխատանքները, այս պարագայում էական չէ, թե դուռ ով ես եղել՝ օմբուդսմեն, թե ով: Քաղաքականության մեջ, հատկապես մեր տարածաշրջանում, քաղաքական ուժերն անում են այն, ինչն արդյունք է բերում, օգուտ, եթե, իհարկե, խոսքը զրպարտության, հերյուրանքի մասին չէ, թեպետ «վիզ կտրելն» էլ կարող է դիտարկվել բռնության կոչ:

- Իսկ նման հայտարարությունները Թաթոյանին օգտակա՞ր են:

- Թաթոյանի պարագայում՝ չէ: Նրա վրա բացասական ազդեցություն թողեց այդ մեկ հայտարարությունը, որովհետեւ ամեն մարդ խոսելուց առաջ պետք է այնպես անի, որ իր խոսույթը համապատասխանի իր կերպարին: Այ, եթե նման արտահայտություն աներ Ամերիկայում կալանավորված հայտնի բլոգերը, որն ունի օնլայն լսարան, ընկալելի կլիներ, սակայն նախկինում իրավապաշտպան մեկից, որը միշտ հանդես է եկել զուսպ խոսքով, նման հայտարարությունները կարող են մերժելի լինել, քանի որ իր ընտրազանգվածն այլ պատկերացումներ ունի: Արտահայտությունների մեջ պետք է շատ զգույշ լինել:

- Վաղարշապատի ՏԻՄ ընտրությունները ցույց տվեցին, որ անցողիկ շեմը չհաղթահարող ուժերը ձայն փոշիացնողներ են, ինչը ձեռնտու է իշխանությանը: Խորհրդարանական ընտրություններին ընդառաջ, այս հարցը կարո՞ղ է լուծվել:

- Ոչ, չի կարող նման բան լինել, շատերը Փաշինյանի օգտին են աշխատելու: ԱԺ-ում լինելու է 3 ուժ, մնացածը ձայներ են փոշիացնելու՝ 10-15 տոկոսով: Հատուկ կուսակցություններ կան, որոնք ներդրված են ձայներ փոշիացնելու համար: Դրանք միշտ եղել են եւ իշխանության, եւ ընդդիմության կողմից: Կան այդպիսի կուսակցություններ նաեւ, որոնց անվանում են դրածո ուժեր: Նրանք այն բանի համար են, որ մրցակիցներին ասեն այն, ինչը հիմնական ուժը չի ցանկանում իր բերանով ասել: Առաջիկա ընտրություններին իշխանությունն առաջադրվելու է, ընդդիմությունն առաջադրվելու է, եւ առաջադրվելու են նաեւ այն մի խումբ կուսակցությունները, որոնք վերջին 30 տարում առաջադրվում են, սակայն ստանում են 0,1 տոկոս: Հարցնում ես՝ ինչո՞ւ ես մասնակցում, ասում է՝ եկել է ժամանակը, պահը հասունացել է, հասարակության աչքերը բացվել են, այժմ 5-6 տոկոս ձայն եմ ստանալու: Այնպես որ, այս անգամ նույնպես ձայների փոշիացման խնդիրը լինելու է:

ԻՄՈՅՄ

ԸՄԲՈՍՏՆԵՐԸ ԵՎ ԽԻԶԱԽՆԵՐԸ ՄԻՇՏ ԷԼ ՓՈՔՐԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆ ԵՆ, ԻՍԿ ՀԱՐՄԱՐՎՈՂՆԵՐԸ ԵՎ ՀՊԱՏԱԿՎՈՂՆԵՐԸ՝ ՄԵԾԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆ

Հասարակությունը զարմացած եւ զայրացած է մի քանի արքեպիսկոպոսների եւ եպիսկոպոսների հայտարարությունից, որով նրանք փաստացի իրենց աջակցությունն են հայտնում Նիկոլ Փաշինյանին՝ Հայոց եկեղեցու եւ Ամենայն հայոց կաթողիկոսի դեմ մղվող պայքարում: Մարդիկ հարցնում են՝ լավ, ինչպե՞ս կարող էին այդ մարդիկ այդքան երախտամոռ լինել եւ ուրանալ այն ամենը, ինչն իրենց համար արել է Ամենայն հայոց կաթողիկոսը, փորձում են այդ մարդկանց բացատրել, որ Նիկոլ Փաշինյանն իրենց օգտագործում է Եկեղեցու դեմ պայքարում, բայց իրենք նույնպես Փաշինյանի զոհերն են, հաջորդ փուլում էլ Փաշինյանն իրենց է քցելու, տարբեր առաջարկություններ են անում: Օրինակ, հայտարարությանը միացածներին կարգալույծ անել եւ հեռացնել Եկեղեցուց, առաջարկում են կաթողիկոսին փոխարինել մեկ այլ՝ ավելի անխոցելի հոգեւորականով: Տեղի ունեցածի առիթով պետք է նկատի ունենալ, որ ոչ մի արտառոց բան իրականում տեղի չի ունեցել, եւ ամեն ինչ շատ օրինաչափ է: Եթե այդ նույն մարդիկ համարում են, իսկ նրանք հենց այդպես էլ համարում են, որ Հայաստանում քաղաքական իշխանությունը զավթված է թուրք-ադրբեջանական ուժերի կողմից, իսկ Փաշինյանը կատարում է նրանց հրահանգները, ապա ինչո՞ւ պետք է Հայաստանի հոգեւոր իշխանությունը զավթված չլինի եւ ծառայի Հայաստանի եւ հայ հասարակության շահերին: Նման բան չի եղել երբեւէ եւ չի կարող լինել նաեւ այս դեպքում:

Պետք չէ զարմանալ, որ 8 կամ 9 բարձրաստիճան հոգեւորական կամ մի քանի սարկավագ անցել են Փաշինյանի կողմը: Երբ որեւէ երկիր նվաճվել է օտարի կողմից, այդ երկրում միշտ էլ եղել են մարդիկ, որ անցել են թշնամու կողմը եւ ծառայել են նրան, աշխարհի պատմության մեջ չի եղել մի դեպք, որ ամբողջ հասարակությունը դիմադրություն ցույց տա զավթիչներին կամ նրանց դեմ պայքարի դուրս գա: Ըմբոստները եւ խիզախները միշտ էլ փոքրամասնություն են կազմել, իսկ հարմարվողները եւ հպատակվողները՝ մեծամասնություն, եւ, հավատացեք՝ Հայաստանը բացառություն չէ: Հայաստանը հարյուրամյակներ գրավված է եղել տարբեր տերությունների կողմից, եւ Հայաստանի թե՛ կաթողիկոսներին եւ թե՛ արքեպիսկոպոսներին նշանակել են այդ տերությունների ղեկավարները կամ առնվազն նրանց համաձայնությամբ՝սկսած պարսից շահերից, հռոմեական կայսրերից մինչեւ օսմանյան սուլթաններ կամ խորհրդային իշխանություններ:

Մինչեւ 2018 թվականը Հայաստանն ինքնիշխան երկիր էր, համենայնդեպս՝ այնքան ինքնիշխանություն ուներ, որ Հայաստանի հոգեւոր իշխանությունը ընտրվում եւ ձեւավորվում էր ներհայաստանյան կամ ներհայկական համաձայնության արդյունքում: Ներկայիս Հայաստանը վասալային կախվածություն ունեցող միավոր է, եւ Հայաստանի հոգեւոր իշխանությունը եւս պետք է ձեւավորվի Անկարայի եւ Բաքվի հետ համաձայնության արդյունքում: Նրանք դա են պահանջում, եւ Փաշինյանը կատարում է նրանց կամքը, ինչը միանգամայն օրինաչափ է: 1804-1813 թվականների ռուս-պարսկական պատերազմի պատճառներից մեկն էլ այն էր, որ ռուսական իշխանությունները՝ ի դեմս գեներալ Պավել Ցիցիանովի, պահանջում էին, որ Հայոց կաթողիկոս նշանակի ոչ թե ներկայիս Իրանի տարածքում գտնվող Ղաջարիների կամ Քաջարիների պետության ղեկավարը՝ շահը, այլ՝ Ռուսաստանը, սակայն ռուսները մերժում ստացան, եւ հիշյալ պատերազմի հիմնական թիրախներից մեկն էլ Էջմիածնի գրավումն էր, ինչին ռուսները կարողացան հասնել:

Այսպիսով կարող ենք ասել, որ Ամենայն հայոց կաթողիկոս Գարեգին Բ-ն արդեն 7 տարուց ավելի հերոսական դիմադրություն է ցուցաբերում երկիրը գրաված եւ օտարներին ծառայող խունտային: Բնական է, որ ժամանակն աշխատում է Ամենայն հայոց կաթողիկոսի դեմ, քանի որ այս 7 տարիների ընթացքում քաղաքական իշխանությունը, տիրապետելով անհամեմատ ավելի մեծ ֆինանսական, ադմինիստրատիվ, տեղեկատվական ռեսուրսների, ունենալով արտաքին հովանավորների աջակցությունը՝ Եկեղեցու հոգեւորականների շարքերում գտել է կողմնակիցներ եւ համագործակցության պատրաստ մարդկանց, հընթացս կալանավորելով եւ քրեական գործերով կաշկանդելով ըմբոստներին եւ չհամագործակցողներին: Մտածել, թե կաթողիկոսը եւ Եկեղեցու հոգեւորականությունն ընդունակ են միայնակ պայքարել եւ հաղթել փաշինյանական իշխանությանը, ոչ թե միամտություն է, այլ՝ անմեղսունակություն: Ամենայն հայոց կաթողիկոսը կարող է որոշ ժամանակ եւս դիմադրել, ժամանակ շահել: Եթե 2026 թվականին Հայաստանը չազատագրվի եւ մնա օտարի հպատակ ուժերի իշխանության տակ, Հայոց եկեղեցին եւս անցնելու է նրանց լիակատար հսկողության տակ, չնայած Փաշինյանն արդեն գրավել է բազմաթիվ եկեղեցիներ եւ թեմեր: Թե ինչպես՝ մենք դրանց արդեն անդրադարձել ենք:

Խոսելով իր իշխանության անկման պատճառների մասին, նախագահ Սերժ Սարգսյանը հայտարարեց, որ ինքը պարտվել է ոչ թե Նիկոլ Փաշինյանին, այլ՝ անհամեմատ ավելի զորեղ ուժերի, հետագայում բացահայտեց, որ այդպիսի ուժ ասելով՝ նկատի ուներ Եվրամիությանը, որ 2018 թվականի իշխանազավթման օպերացիան գլխավորում էր Հայաստանում ԵՄ դեսպան Սվիտալսկին: ԵՄ ղեկավարությունն այսօր գտնվում է լիբերալ-գլոբալիստների ձեռքին, եւ հայաստանյան խունտան ծառայում է նաեւ նրանց: Ամենայն հայոց կաթողիկոսը եւս չի պայքարում միայն Նիկոլ Փաշինյանի դեմ, եւ եթե նա էլ պարտվի, նույն տրամաբանությամբ կարող է ասել, որ պարտվել է ոչ թե Փաշինյանին, այլ՝ ավելի զորեղ ուժերի, եւ դա միանգամայն ճիշտ կլինի: Եվրագլոբալիստների եւ թուրք-ադրբեջանական ուժերի շահերի համընկնման մասին հերթական անգամ խոսելն ավելորդ է: Հայաստանի եւ Հայոց եկեղեցու պարտությունը կախելու միակ ճանապարհը Հայաստանի ազատագրումն է: Քանի դեռ Հայաստանն ազատ չէ, Հայոց եկեղեցին չի կարող ազատ լինել:

Ավետիս ԲԱԲԱՋԱՆՅԱՆ

ԿԱ՛Մ, ԿԱ՛Մ...

Դյուրականի Սուրբ Հովհաննես եկեղեցու հոգեւոր հովիվը՝ Տեր Վրթանես քահանա Բաղալյանը, ըստ «Հրապարակ»-ի, լրագրողներին հայտնել է, որ անձամբ ինքը Վեհափառ հայրապետին խնդրում է արդար ու ողորմած մոտեցում ցուցաբերել այն անձանց հանդեպ, որոնք հայտնվել են ճնշումների, շանտաժի, վախի կամ կեղծ խոսքերի ազդեցության տակ: Նրա խոսքը, որպես հոգեւոր հովվի, արժանի է հարգանքի՝ հատկապես որ այն վերաբերում է այլ հոգեւորականների: Բայց պատկերացրեք մի այնպիսի իրավիճակ, երբ նիկոլականներից ոմանք միանում են ընդդիմությանը, ու մտածեք, թե ինչ կաներ նրանց հետ վարչապետի աթոռից կառչած անձը: Իսկ ես ասեմ՝ ինչ էլ ինքն աներ, դա իր տեսակետից արդարացված կլիներ: Որովհետեւ այդ պահին նժարի վրա էր դրվելու իշխանության պահպանման հարցը: Իսկ թե ինչ արժեք ունի այդ հարցը, կարծում եմ, մեր ժողովուրդն արդեն զգացել է իր մաշկի վրա: Օսմանյան սուլթանները, ի դեպ, մի քանի դար իրավունք ունեին, իշխանության հասնելու կամ պահպանելու համար, այն աշխարհ ուղարկել իրենց հարազատ եղբայրներին: Դա թույլատրող՝ «Ֆաթիխայի օրենք» անվանումը կրող փաստաթուղթը մշակվել է դեռեւս 15-րդ դարում:

Նիկոլը, իհարկե, ո՛չ այդքան դաժան է, եւ ո՛չ էլ 21-րդ դարում այդ դաժանությունը կներվեր նրան, եթե դիմեր նման միջոցի: Բայց որեւէ մեկին բանտարկելը, ինչպես գիտենք, խնդիր չէ նրա համար: Մեկ-մեկ առանձին դատավորներն են խանգարում նրան այդ հարցում, բայց դրա դեմն առնելն էլ բարդ չէ. դատավորների անկախությունն ապահովելուն կոչված՝ «ԲԴԽ» հապավումով կառույցը ողջ լինի: Այնպես որ, եթե Վեհափառ հայրապետը ցանկանում է չպարտվել իր դեմ Նիկոլի հրահրած պատերազմում, ապա պետք է ցուցաբերի ոչ թե ներողամիտ վերաբերմունք, ինչպես Տեր հայրն է ակնկալում, այլ շարժվի ըստ պատերազմական իրադրության, որովհետեւ որքան էլ հավատացյալ ժողովրդի ակնկալիքները լինեն հումանիստական բնույթի, այդ պատերազմում Վեհափառի պարտությունը հանգեցնելու է հայոց եկեղեցու վերացմանն այնպիսի տեսքով կամ կարգավիճակով, ինչպիսին առկա է այսօր:

Որպեսզի «Հրապարակ»-ի թերկուզ մեկ ընթերցողի մոտ կասկած չմնա, թե ինչպիսի մարդ կամ ղեկավար է Նիկոլը, ներկայացնեմ լրագրողների հետ նրա ճեպազրույցի մեկ դրվագը: Երբ նրան հարցնում են, թե ինչպես է հնարավոր սեռական կյանքով չապրելու ուխտը խախտած մեկ հոգեւորականին նմանատիպ մեկ այլ հոգեւորականի միջոցով հրաժարական պարտադրելը, չքմեղանում է, թե դրանից տեղյակ չէ, որովհետեւ, իր ասելով, հրավիրած հոգեւորականների կենսագրությանը լավ չի ծանոթացել: Այստեղ են ասել՝ եփված հավի ծիծաղը կգար նման պատասխանից: Այնինչ, վարչապետի պաշտոնը զբաղեցնողը նախ չէր կարող դա չիմանալ, երկրորդ՝ ինչպես եղավ, որ մյուսներինը գիտի, սրանցը չգիտի: Եվ, ինչն շատ ավելի կարեւոր է, հենց Արգիշտի Էլբեկի Քյարամյանին պետք է նշանակեր ՊՎԾ պետի պաշտոնակատար, իսկ երկու տարի չանցած՝ Քննչական կոմիտեի նախագահ, որպեսզի իր մի խոսքը վերջինիս համար օրենքից բարձր արժեք ունենար: Ինչ վերաբերում է կոմիտեի նախագահի պաշտոնից նրա ազատմանը, ապա, իմ կարծիքով, դրա պատճառն այն էր, որ վերջինս ԱԺ դահլիճում «մեծարգո վարչապետի» ներկայությամբ չկարողացավ պահել իրեն ինչպես հարկն է:

Ինչեւէ, Վեհափառ հայրապետը կամ պետք է աթոռակալ կաթողիկոս նշանակի՝ ինչ-որ պահից հրաժարական ներկայացնելու համար, կամ էլ, եթե չունի նման ցանկություն, ապա պետք է մի կողմ դնի ներողամտության վերաբերյալ մտքերը եւ Եկեղեցին մաքրի դավաճանի վարքագիծ դրսեւորած հոգեւորականներից, որովհետեւ գործող իշխանության կողմից դրված չէ Եկեղեցին մաքրելու խնդիր: Օտարների կողմից նրա առջեւ դրված է հայոց եկեղեցու հոգեւոր ազդեցությունը զրոյացնելու նպատակ, ու նա փորձում է դա իրագործել՝ խոսելով «հոգեւոր արժեքներից բխող՝ արժեքահեն հանրություն, արժեքահեն պետություն, արժեքահեն հասարակություն ունենալու» վերաբերյալ: Ու, խտրականություն չդնելով միջոցների մեջ, համառությամբ գնում է այդ նպատակի իրագործմանը: Ինչ վերաբերում է Եկեղեցին մաքրելուն, ապա դա կարվի այն ժամանակ, երբ Հայաստանի իշխանության գործողությունները պայմանավորված կլինեն ոչ թե թշնամու թելադրանքով, այլ կբխեն ներքին կարիքներից:

Վախթանգ ՍԻՐԱԴԵՂՅԱՆ

ՍԿԱՆԴԱԼ

ԻՆՉԻՑ Է ԾԱԳԵԼ ԶՈՐԱԿԱՆԻ ՀԱՇՎԵՀԱՐԴԱՐԸ

Դամացանցում երեկվանից տարածվել է Նոյեմբերյան համայնքի Զորական գյուղի 9-11-րդ դասարանցի տղաների կողմից Նոյեմբերյանի պետական քոլեջի ուսանող Ալեն Ջանվելյանին խմբակային ծեծի ենթարկելու, նրա արժանապատվությունը ստորացնելու տեսանյութը: Մեզ թվում էր, թե հայ մարդը թույլին, ընկածին ոտքերով չի հարվածում, այն էլ՝ խմբով,

այն էլ՝ պատանեկան տարիքում: Սակայն վերջին տարիներին շատ բան է փոխվել հայաստանցիների, այդ թվում՝ անչափահասների վարքում: ՆԳՆ խոսնակ Նարեկ Սարգսյանը համացանցում տարածված այդ տեսանյութի տակ գրառում է կատարել. «ՆԳՆ Համայնքային ոստիկանության Նոյեմբերյանի բաժնի ծառայողները տեսանյութում երեւացող բոլոր անձանց հայտնաբերել են, խուլիգանության կասկածանքով ձերբակալել եւ ներկայացրել նախաքննական մարմին, ինչից հետո կալանավորվել են»: Խոցելի անձանց իրավունքների պաշտպանությամբ զբաղվող Նանար Պողոսյանը դեպքի վերաբերյալ գրել է. «Ժողովուրդ ջան, ՆԳ նախարարությունն արձագանքել է, թե կալանավորել են: Է, ուրեմն, այդ ծեծող տղաներից 3 հոգին ազատության մեջ է, 20 օր նստել են, հելել: Էն, որ չնչին բան լինի, է, ամիսներով կկալանավորեն, հիմա մարդիկ էդ տեսակ դաժանություն են անում՝ խմբակային, որից 3-ը 20 օր նստում հելնում են, թե բա՝ նախաքննությունը շարունակվում ա... ասեմ, որ դեպքը տեղի է ունեցել սեպտեմբերին, իսկ կալանքը եղել է նոյեմբերին, այն էլ՝ 20 օրով, այդ մարդիկ 3-4 օր ա՝ արդեն ազատության մեջ են»:

Ծեծողներից մեկը «Արթիկ» քրեակատարողական հիմնարկի պետի տեղակալ Ռուբեն Գասպարյանի որդին է: Քոլեջի ուսանող Ալեն Ջանվելյանին ծեծելու, վիրավորելու, նրա արժանապատվությունը նվաստացնելու դեպքը տեղի է ունեցել այս տարվա սեպտեմբերի 15-ին: Դրա մասին տեսանյութը վաղուց տարածվել էր նոյեմբերյանցիների մոտ, հիմա համացանցում է հայտնվել, եւ դիտողներին զայրացրել է թույլի, անպաշտպանի նկատմամբ հաշվահարդարի դաժանությունը: Ալեն Ջանվելյանի հայրը սահմանմերձ Կոթի գյուղից է, մայրը՝ Զորականից: Մեր տեղեկություններով՝ նրանց ընտանիքում խնդիրներ կան: Դեպքի պատճառը եղել է այն, որ Ալեն Ջանվելյանն ինչ-որ առիթով հայհոյել կամ վիրավորել է Նոյեմբերյանի պետական քոլեջում սովորող զորականցի տղաներին: Դրանից հետո վախենալով այդ տղաների հաշվեհարդարից՝ այդ մասին պատմել է քոլեջի զինղեկին, զինղեկն էլ քոլեջի վարպետին է խնդրել՝ կանխել տղայի նկատմամբ հաշվեհարդարը: Քոլեջի վարպետը կանչել է զորականցի տղաներին, հարթել միջադեպը:

Իմ տեղեկություններով՝ բացի այդ, Ալենը գումար է պարտք եղել զորականցի այլ տղաների: Զորականցի տղաները Նոյեմբերյան քաղաքի կենտրոնում, նախկին գյուղատնտեսական շուկայի տարածքում Ա. Ջանվելյանի հետ հաշվեհարդար են տեսել՝ նրան պատժելով, թե ինչու է դեպքի մասին պատմել քոլեջի աշխատողներին: Տեսանյութը նկարահանել է ծեծող խմբի անդամներից մեկը՝ որպես իրենց կողմից պատժի իրականացման ապացույց: Իրենք իրենց հանցանքը տեսանկարել են, հետո տեսանյութը հեռախոսից հեռախոս է անցել ու հայտնվել համացանցում: Ակնհայտ է, որ խմբակային հաշվեհարդար կատարած տղաներն իրենց ընտանիքներում, Զորականի դպրոցում պատշաճ դաստիարակություն չեն ստացել: Այդ տղաները պետք է օրենքով սահմանված կարգով իրենց պատիժը ստանան, հասկանան կատարածի լրջությունը, որ չափահաս դառնալով՝ հանցագործներ չդառնան, չխորտակեն իրենց եւ այլոց կյանքը: Քոլեջ սովորաբար հաճախում են նրանք, ովքեր ֆինանսական եւ այլ հնարավորություն չունեն՝ բուհերում սովորելու: Նոյեմբերյանի պետական քոլեջում վերջին տարիներին դրական շատ փոփոխություններ են կատարվել, քոլեջը հաջողություններ ունի: Բարոյական եւ իրավական առումներով դատապարտելի միջադեպը չպետք է ստվերի այդ կրթական հաստատության կատարած դրական աշխատանքը:

Ոսկան ՍԱՐԳՍՅԱՆ

ՃԱԿԱՏԱԳՐԻ ԱՆԻՎԸ ՊՏՏՈՒՄ ԵՆ ՆԱԵՎ ԿԱՆԱՅՔ

Պատմությունը կերտում են ոչ միայն տղամարդիկ, ու պատմությունը միայն տղամարդկանց հաղթանակների ժամանակագրությունը չէ: Ժամանակակից կինոն ավելի ու ավելի է ուշադրություն դարձնում կանանց, ովքեր պատմության մեջ ունեցել են նշանակալի դերակատարում, երբեմն նաեւ՝ շրջադարձային կերպով փոխել են պատմության անիվի ընթացքը: Արքայական պալատներից մինչեւ գիտական լաբորատորիաներ՝ կանայք կոտրել են կարծրատիպեր եւ ճանապարհ բացել մյուս կանանց ու հասարակությունների համար:

Ներկայացնենք մի քանի կինոնկար ու սերիալ՝ պատմության մեջ նշանակալի դեր ունեցած կանանց մասին: «Էնա՝ Իսպանիայի թագուհին», 2024 թվական: Բրիտանացի երիտասարդ արքայադուստր Վիկտորյա Եվգենիա Բաթենբերգցին, որին մտերիմներն ու հարազատները պարզապես անվանում են Էնա, թողնում է հայրենիքն ու մեկնում Իսպանիա, որպեսզի ամուսնանա իսպանական Ալֆոնսո 3-րդ թագավորի հետ: Սակայն հեքիաթն ավարտվում է հարսանիքի օրը: Նորապսակների վրա հարձակվում են, եւ Էնան հրաշքով է ողջ մնում: Այդ պահից սկսած՝ նրա կյանքը վերածվում է տոկունության փորձությունների շքահանդեսի: Առջեւում պալատական կյանքն է՝ նրա հանդեպ լի թշնամանքով, երեխաների ողբերգական հիվանդությունները, հարազատների դավաճանություններն ու արյունոտ 20-րդ դարի պատմական կտրուկ շրջադարձերը: Ճակատագրի բոլոր հարվածներն արժանապատվորեն ընդունած եւ կրած թագուհու կերպարը մարմնավորել է իսպանական կինոյի աստղ Քիմբերլի Թելը, որը հայտնի է «Իերո» սերիալից: Ալֆոնսո 3-րդ թագավորի կերպարը մարմնավորել է Խոան Ամարգոսը: Այս կինոպատումը կարելի է դիտել ցանցային ստրիմինգային հարթակներում:

«Մեծությունը»՝ 2024 թ., պատմում է ֆոտոմոդել Լի Միլերի մասին, որը եղել է Պաբլո Պիկասոյի մուսան: Նա Երկրորդ աշխարհամարտի տարիներին մարտահրավեր է նետել ճակատագրին ու դարձել զինվորական թղթակից: Նրա տեսախցիկն անմահացրել է դարաշրջանի ամենից ողբերգական ու շրջադարձային պահերը՝ Նորմանդիայում արեւմտյան զորքերի ափհանումից մինչեւ Դախաուի ազատագրումը: «Մեծությունը» օպերատոր Էլեն Կուրասի լիամետրաժ դեբյուտն է: Գլխավոր դերում հանդես է եկել Քեյթ Վինսլեթ Քերասը, որն արդեն հայտնի է «Զուտ բանականության հավերժական փայլատակում»-ից եւ պատմական «Վերսալյան սիրավեպ» դրամայից, որտեղ եւս որպես օպերատոր է հանդես եկել:

«Վտանգավոր էլեմենտը», 2019 թվական: Սա Մարջան Սաթրապիի խորաթափանց կենսապատում հանդիսացող դրամատիկ ֆիլմ է: Սաթրափին «Օսկարի» էր արժանացել «Պերսեպոլիսի» համար: Ժապավենը պատմում է տաղանդավոր գիտնական Մարիա Սկլոդովսկայա Կյուրիի մասին, որի կերպարը մարմնավորել է Ռոզամունդ Փայքը: Կինոնկարում ներկայացված են գիտնականների կյանքի հիմնական դրվագները՝ սկսած Պյեր Կյուրիի հետ հանդիպումից մինչեւ Նոբելյան մրցանակ ստանալն ու գիտական հայտնագործությունները, որոնք, այսպես թե այնպես, շրջադարձային նշանակություն ունեցան մեր ժամանակների համար:

Նյութերը՝ Նարեկ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Թուրքիայում ծախսերի եւ եկամուտների միջեւ «անդունդը» խորանում է

Թուրքիայում այս տարվա սկզբից սկսած, «մաքուր» նվազագույն աշխատավարձն աճել է մոտ 30 տոկոսով՝ կազմելով 22 հազար 104 լիրա: Սակայն շատ փորձագետներ, որոնք զբաղվում են երկրի տնտեսական կյանքի հարցերով, կարծում են, որ դա չափազանց քիչ է եւ չի ծածկում գնաճի պատճառով ավելացած ծախսերը: Այս մասին գրում է Vestnik Kavkaza պարբերականը: Թուրքական շատ արհմիություններ պահանջում են, որ նվազագույն աշխատավարձը երկրում հասցվի մինչեւ 30 հազար լիրայի, որը համարժեք է մոտ 710 ամերիկյան դոլարին: Դա, ըստ մասնագետների, կկարողանա ծածկել այն անհարմարությունները, որոնք ունենում են քաղաքացիները՝ ինֆլյացիայով պայմանավորված: Ենթադրվում է, որ ավելացումը կարող է լինել կամ մինչեւ 20 տոկոս՝ հասցվելով 26 հազար 854 լիրայի, կամ մինչեւ 25 տոկոս, հասցվելով 27 հազար 630 լիրայի: Ամեն դեպքում, իշխանությունների ձեռնարկածը չի համապատասխանում արհմիությունների ակնկալիքներին: Լավատեսները կարծում են, որ նույնիսկ նման քայլը շատ ընտանիքների համար կարող է զգալի դրական նշանակություն ունենալ: Հաշվարկները ցույց են տվել, որ պաշտոնական նվազագույն աշխատավարձը՝ 22 հազար 104 լիրան, շատ ավելի քիչ է, քան, այսպես կոչված, «քաղցի նվազագույն շեմը», այսինքն՝ անհրաժեշտ նվազագույն գումարը, որն անհրաժեշտ է սննդի նվազագույն ծախսերը հոգալու համար: Դա նշանակում է, որ ստանալով նվազագույն աշխատավարձ՝ մարդը չի կարող նույնիսկ նորմալ սնվել: Մասնագետները նկատում են, որ նվազագույն աշխատավարձը քաղաքացուն նախկինում բավականին արժանապատիվ բարեկեցություն էր ապահովում, ու ներկայի համեմատությունը ցույց է տալիս, թե թուրքական ազգային արժույթը որքան է էժանացել: Նրանք, ովքեր պահանջում են նվազագույն աշխատավարձի ավելացում, հայտարարում են, որ իրենց պահանջը բոլորին է շահավետ լինելու, նույնիսկ՝ նրանց, ովքեր վաստակում են ավելին, քան նվազագույն աշխատավարձն է: Բոլորի եկամուտներն ինդեքսացիայի կենթարկվեն, սոցիալական որոշակի երաշխիքները կավելանան: Գլոբալ առումով էլ՝ նվազագույն աշխատավարձի աճը ճիշտ ինդեքսիկացիայի դեպքում կարող է փոքր, բայց դրական «խթան» դառնալ տնտեսության համար: Ու մինչ շարունակվում են քննարկումները, հասկանալի է, որ մարդիկ ակնկալիք ունեն, որ նվազագույն աշխատավարձը պետք է բարձրանա, որպեսզի հնարավոր լինի գոյատեւել:

Եղեւնիներն այլանդակվել են դենդրոլոգի եզրակացությամբ

Վանաձորի կենտրոնում դարավոր եղեւնիներ են անդամահատվել: Այլ կերպ չես անվանի այն, ինչ իրականացրել են ծառերի գլխին: Մեր տեղեկություններով, դա տեղի է ունեցել քաղաքի գլխավոր դենդրոլոգի համաձայնությամբ: Լուսանկարները «Հրապարակին» են ուղարկել վանաձորցիները: Նրանք պատմում են, որ Տիգրան Մեծի 48 հասցեում, որը քաղաքի կենտրոնական վայրերից է, եւ Զաքարյան 8 հասցեում, կենտրոնից ոչ հեռու գտնվող Լճեր թաղամասում քաղաքապետարանը եղեւնիներ է էտել, որի արդյունքում ծառերն այլանդակվել են: Վանաձորցիները պարզապես չեն ճանաչում իրենց թաղամասերը: Դարավոր եղեւնիները խեղճացել են, ասես ողորմելի ցնցոտիներ հագած լինեն: «Սա ոչ այլ ինչ է, քան թշնամություն, ատելություն քաղաքի նկատմամբ: Էս դարավոր ծառերը, որոնք էս քաղաքի շքեղությունն էին ապահովում, ծիծաղելի տեսք են ստացել: Մի նայեք, թե ոնց են կոտորել: Մարդիկ դուրս եկան, բողոքեցինք, բայց ո՞վ է Հայաստանում մարդկանց լսում: Ծառն ո՞ւմ էր խանգարում, թթվածին էր, որ պետք է շնչենք: Բայց հիմա չենք շնչի»,- ասում է վանաձորցի Մարինեն: Վանաձորի քաղաքապետ Արկադի Փելեշյանի խոսնակը մեզ ասաց, որ միայն հին, ոչ կենսունակ ծառերն են կտրատվում, խոստացավ մանրամասներ հայտնել ավելի ուշ: «Դենդրոլոգի եզրակացությունը ձեռքիս տակ կլինի, կմանրամասնեմ»,- ասաց նա: Դեռ սպասում ենք: Փաստորեն, ծառերն այլանդակվել են քաղաքի գլխավոր դենդրոլոգի եզրակացությամբ:

Սյուզան ՍԻՄՈՆՅԱՆ

Ակումբում տեղերը խիստ սահմանափակ են՝ նախատեսված ընդամենը գիրք սիրող 100 անձի համար

NEWMAG

Newmag հրատարակչությունը որոշել է հիմնել գրքասերների ինտելեկտուալ ակումբ: Այն կարդացող եւ մտածող մարդկանց համար նոր հարթակ է՝ լի տարբեր հնարավորություններով: Ակումբի անդամ դառնալու համար հարկավոր է վճարել 100 հազար դրամ, եթե ցանկանում ես 12 ամսով անդամակցել ակումբին, եւ 60 հազար դրամ, եթե ցանկանում ես անդամակցել 6 ամսով: Newmag հրատարակչության տնօրեն **Արտակ Ալեքսանյանը**, «Հրապարակի» հետ զրույցում անդրադառնալով Newmag Signature Club-ին, որը կգործի 2026 թվականի հունվարի 1-ից, ասում է, որ ինքնուրույն մտածող մարդիկ սովորաբար հավաքվում են փոքր խմբերով՝ նոր գաղափարներ փոխանակելու համար: Newmag Signature Club-ը շարունակում է այդ ավանդույթը եւ ստեղծում է ուրույն մի վայր՝ այն յուրահատուկ մարդկանց համար, ովքեր կարդալը, մտածելը եւ գործելը դարձրել են իրենց կենսակերպը: Սա 21-րդ դարի կենսակերպն է:

- Ինչպե՞ս ծագեց գրքասերների ինտելեկտուալ ակումբ հիմնադրելու գաղափարը: Ի՞նչ է տալու այն ակումբի անդամներին:

- Շատ երկար ժամանակ մեր ընթերցողները խնդրում էին, որ ունենանք մեր սեփական գրքի ակումբը, որտեղ կկարողանանք քննարկել գրքերը, դրանցում արծարծված թեմաները, ինչպես նաեւ՝ կփոխանակվենք մտքերով: Գաղափարը ծնվել է ընթերցողների պահանջով, որպեսզի լինի հարթակ, որտեղ մարդիկ կկարողանան փոխանակվել գաղափարներով: Գաղափարը զարգացրինք, սահմանեցինք գրքեր ստանալու տարեկան բաժանորդագրության մեխանիզմը, որը հնարավորություն կտա առաջին հերթին, որ գրքի ակումբին միանան նրանք, ովքեր իսկապես հետաքրքրված են գրականությամբ, այլ ոչ թե ուղղակի ուզում են ժամանակ անցկացնել: Տնտեսական մոդելը ստեղծելիս հաշվի ենք առել, որ գրքերը հնարավոր է մատչելի չլինեն շատերի համար, իսկ տարեկան բաժանորդագրությամբ 100 հազար դրամով դու ամեն ամիս փաստացի ձեռք ես բերում երկու գիրք՝ 8 հազար 333 դրամով. այն բավականին մատչելի է: Եվ հնարավորություն է ստեղծվում տարվա ընթացքում ունենալ 24 գիրք: Հետո մենք գաղափարն ավելի զարգացրինք: Բացի գրքերից, որ տրամադրելու ենք անդամության շրջանակում, առաջարկում ենք նաեւ դասախոսություններ, վարպետության դասեր: Դրանից հետո ծագեց գաղափար, որ ակումբի մասնակիցները պետք է ստանան զեղչեր այն կազմակերպություններից, որոնք մեր գործընկերներն են: Դրանք են Burmunk, Danz, Time, Touse, Hermitage եւ այլ խանութների ցանցերը: Գաղափարն առավել ընդլայնեցինք՝ ներգրավելով հայ դիզայներների: Երեք հայ դիզայներներ՝ Արմեն Գալյանը, Նուռը եւ Արամ Նիկոլյանը, մեզ համար ստեղծելու են հատուկ պարագաներ, աքսեսուարներ եւ հագուստ: Դրանք հասանելի կլինեն բացառապես ակումբականների համար: Այսինքն՝ գրքային ակումբի գաղափարը զարգացրինք՝ դարձնելով մի ամբողջ ենթակառուցվածք, երբ տարեկան կտրվածքով Newmag-ին միանալով, ստանում ես գրքեր, մասնակցում ես դասախոսությունների եւ փառատոների, օգտվում ես խանութների զեղչերից եւ ձեռք ես բերում էքսկլյուզիվ պարագաներ ու հագուստ:

- Հունվարի 1-ից է ակումբն իր աշխատանքը սկսելու:

- Այո, այժմ բաժանորդագրությունը բաց է, իսկ տեղերը խիստ սահմանափակ են, այն նախատեսված է 100 անձի համար: Տեղերի կեսից ավելին վաճառվել է: Ինչու ենք ընտրել 100 անձ՝ որպեսզի կարողանանք փոքր մասշտաբով մատուցել ծառայություններ, որոնք կլինեն որակյալ: Այդ ամենից հետո, երբ գնահատենք մեր ուժերն ու պոտենցիալը, գուցե ընդլայնենք շարքերը:

- Իսկ ովքե՞ր են դասախոսություններ կարդալու՝ «Նյումեգ»-ի հեղինակները:

- Ոչ, դասախոսություններով հանդես են գալու տարբեր հրավիրյալ մասնագետներ, արտերկրից միջազգային փորձագետներ, հայ փորձագետներ եւ այլն:

- Ակումբի հիմնական քննարկումներն ինչի՞ մասին են լինելու, բացառապես՝ գրականության:

- Գրքի ակումբում, ըստ նախատեսված կարգի, ամիսը մեկ անգամ քննարկելու ենք գրականություն, իսկ վարպետության դասերը, դասախոսությունները լինելու են տարբեր թեմաներով՝ մշակույթ, ճարտարապետություն, արհեստական բանականություն, անձնական աճ, ռեգիոնալ քաղաքականություն, ֆինանսներ եւ այլն: Այս պահի դրությամբ ենթադրում եմ, որ ակումբականներին շաբաթը մեկ իրադարձություն կառաջարկենք, ամիսը մեկ անգամ կլինի գրքի շնորհանդես, գրքի քննարկում, մեկ անգամ՝ վարպետության դաս եւ մեկ դասախոսություն: Նախատեսված է բաժանորդագրություն՝ նաեւ վեց ամսով: Շատերը գաղափարին կարող են վերապահումներով մոտենալ կամ գուցե ֆինանսական խնդիրների առջեւ կանգնած լինեն, այդ պատճառով մենք անդամակցության հնարավորություն ենք տվել նաեւ վեց ամսով, եթե ցանկանան, հետագայում կարող են շարունակել: Նրանք եւս օգտվելու են բացառապես նույն փաթեթից՝ նույն հնարավորություններով:

Հայկ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Այսօր գրող, հրապարակախոս, «Գարուն» եւ «Անդին» ամսագրերի նախկին խմբագիր Մերուժան Տեր-Գուլանյանի ծննդյան օրն է: Շնորհավորում ենք հայտնի արձակագրին, բանաստեղծին՝ ծննդյան 77-ամյակի կապակցությամբ, եւ հրապարակում ենք նրա բանաստեղծություններից մեկը:

ԱՆԱՍՊԵՏ ԵՐԿԻՐ

Կյանքս ձեզ հետ անցավ՝ օրս անցավ անես,
Երբ թողեցի տունս հեռու Էրզրումում,
Եվ փառքի հին ճամփան՝ Երեւանաչտես,
Որը երեկ նույնիսկ Տերյանին էր հուզում:
Օ-, մոգական Չարենց, դու, որ Կարսն ես թողել,
Եվ Մեծարենց տղա Լուսամփոփահյուղակ,
Կյանքի մաշվող ծիրում ո՞վ է արյուն հեղել,
Որ ջրերին բացի տառապանքը ձեր փակ:
Եվ ո՞վ սուսեր առավ ու ձեր մեջքին կապեց,-
Հանուն հայոց փառքի՝ աշխարհներին ի տես,
Լռության ու խոսքի սահմանները չափեց,-
Երբ կյանքն անսեր անցավ, օրը անցավ անես…
Կյանքս անծես անցավ, ես մնացի ծեսում,-
Հանդգնեցի նույնիսկ Վարդանանցը հերքել,
Ես ինձ կաթիլ տեսա Խորենացու թասում,-
Եվ չուզեցի հայոց չեղած փառքը երգել:
Ես ինձ կաթիլ տեսա, բայց սրբազան թասում,-
Ձորերի մեջ տրտում, անառագաստ, անտեր,
Այնինչ բառը անդարձ քո անունն է խոսում,-
Եվ գիշերվա խորքում հռչակում է Քեզ տեր:
Դու իմ տերը հիմա, ես՝ փակ միերադուռ,-
Մղձավանջը անվերջ, բարբառումը անել,
Մազերիդ մեջ ծաղիկ ու ձեռքերիդ մեջ նուռ,-
Իմ տեսիլքն է գուցե այդպես քեզ խաչքարել:
Թե Մոմիկը վարպետ, հանճարի տակ կքած,-
Գուցե Նարեկացին Աստծո ընդդիմախոս,
Ձեռքերիդ մեջ խաղող ու մազերդ ծաղկած,-
Դեպի ո՞ւր ես գնում հավերժ Եփրատահոս:
Այդպես ո՞ւր ես գնում՝ քեզ լեռներում թողած,
Որտեղ ձյունը՝ ճերմակ, ստահոտը՝ տիրող,
Պատմությունդ՝ մշուշ ու սահմաններդ՝ բաց,-

Կյանքս ձեզ հետ անցավ

Ամեն հեռացողդ՝ մի թաս հայրենահող:
Այնինչ ոչ ոք սիրո մի բուռ հող չբերեց,
Որ սփռեր ի տես Արարատի փեշին.
Գնացողին այլոց ծիածանը գերեց,
Մնացողը՝ պահակ շիրիմներին քո հին:
Կյանքս ձեզ հետ անցավ, ես մնացի մենակ,-
Ոտաբոբիկ կանգնած Մասիսների դիմաց.
Ես անառակ որդիդ՝ մեղա, լեռ իմ, մեղա,
Երբ շներն են հաչում անվերջ անաղուհաց:
Իսկ դու խոնարհ կանգնած աստվածզգայաց, ճերմակ,
Հայացքիդ մեջ կապույտ անսահմանը ծովի,-
Անմահ հայոց վկա որպես ասպետ միակ,
Հուշարձանն ես անհաս հայրենական ցավի:
Եվ ո՞վ պիտի այսօր անվախ ելնի ոտքի,
Մաքրագործող ջրով, ա՜զգ իմ, հոգիդ ցայի՛,
Առաջնորդը դառնա ասպետական փառքիդ,-
Փրկի թագն արքայի Հավերժական Հայի:



Մերուժան ՏԵՐ-ԳՈՒԼԱՆՅԱՆ

ՀՀ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԴԱՐՁԵԼ Է ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԻ ՄԻՋԱԶԳԱՅՆՈՐԵՆ ՃԱՆԱՉՎԱԾ ԿԱՏԱՐԱԾՈՒ

Արամայիս ԱՍԼԱՆՅԱՆ

Եկեղեցին իր կառուցվածքով փակ, պահպանողական, ոչ ժողովրդավար, աստիճանակարգված (սուբորդինացված), ինքնակառավարվող կրոնական կառույց է: ՀՀ գործող իշխանությունը, առանց հավատավոր հայության կարծիքը պարզելու, փորձում է Հայ առաքելական եկեղեցին (ՀԱԵ) «ժողովրդավարացնել», բայց չի ստացվում: Ի հակադրություն ՀԱԵ-ի՝ պետությունը պարտավոր է լինել բաց, թափանցիկ, ազատական, ժողովրդավար, մի խոսքով՝ աշխարհիկ առաջադիմության կրող (թե որքանով է դա ստացվում՝ այլ հարց է):

Բոլոր ժամանակներում ՀԱԵ-ն ազգային հիշողության կրողն ու ինքնության խորհրդանիշն է եղել եւ կա, որոնց հիման վրա ձեւավորվում եւ զարգանում է ազգային գաղափարախոսությունը: Իսկ վերջինիս ներքո զարգանում եւ բազմազանվում է ազգային մշակույթը: Ուստի, երբ ազգային գաղափարախոսությունը խոթում են քաղաքականության դաշտ, այն վերածվում է կեղծ քաղաքական կատեգորիայի: Հետեւաբար, ազգային գաղափարախոսությունը պատմա-մշակութա-կրոնական (եկեղեցական) կատեգորիա է եւ ՀԱԵ-ի կենսագործունեությունը ապահովող գործիքակազմի գլխավոր բաղադրիչներից մեկը:

Ըստ ՀՀ Սահմանադրության, ՀԱԵ-ն անկախ է պետությունից: Հիրավի, անկախ է, քանզի ՀԱԵ-ն եղել է եւ կա համայն հայության գոյության եւ ինքնության գլխավոր երաշխավորը, քանզի Հայաստան-Սփյուռք համախմբվածության եւ համագործակցության հիմնական կապող օղակն է, քանզի ճակատագրական պահերին աշխարհասփյուռ եւ Հայաստանի հայության ընդհանրական կարծիքն արտահայտող առանցքային կառույցն է:

ՀՀ իշխանություն-ՀԱԵ իրավական հարաբերությունները երկկողմանի հավասարազոր խորհրդակցական են: Բացառվում են փոխադարձ պարտադրանքն ու բռնությունը, ներքին եւ արտաքին միջամտությունը: Հայոց պետականությանը եւ ՀԱԵ-ին առնչվող ընդհանրական հարցերում խորհրդակցաբար համաձայնության չգալու դեպքում՝ ՀԱԵ-ՀՀ իշխանություն բանակցությունները շարունակվում են: Կրկին փոխհամաձայնության չգալու դեպքում՝ հարցը դրվում է համազգային քննարկման:

Ներկայում ՀՀ իշխանությունը փորձում է ՀԱԵ-ն զրկել ինքնակառավարումից, առավել եւս՝ կուսակցապետությանը ենթակա խամաճիկ կարգել: Դրա մասին են վկայում իշխանություն-ՀԱԵ հարաբերությունների ներկայիս սրացումները, որոնք դրսեւորվում են բռնություններով, ձերբակալություններով: Հայկական սփյուռքն անորոշության մեջ է, օտարվել է Հայաստանից: Խնդիրն անձնավորվել է, թիրախավորվել է Ամենայն հայոց կաթողիկոսի անձը, կուսակրոնության ուխտը եղծելու մեղադրանքով: Ակներեւ է, որ սա պատրվակ է: Հավանական է, որ պատվեր է իջեցվել Հայաստանի իշխանական կատարածուներին: Կուսակրոնության մեղադրանքով հոգեւորա-եկեղեցական տիրույթ է ներխուժել անձնիշխանական աշխարհիկ քաղաքականությունը: Գործում է «պառակտիր, որ տիրես» սկզբունքը: Ազգակործան այս գործարքի պատվիրատուները, հավանաբար, չեն էլ կարեւորում, որ հանրային հակազդումը թափ է առնում՝ ՀԱԵ հետեւորդներն ավելանում են, իսկ քաղաքական ուժերի եւ իշխանության հանդեպ վստահությունը՝ պակասում: Ինչ-որ տեղից պատվիրված «նոր» ՀԱԵ-ի մտապատկերը շինծու այլընտրանք է: Սա Հայաստանում նոր տիպի քաղաքականացված աղանդավորական շարժում է, որը (կուզեի սխալվել) երկրում ընթացող քաղաքական ուղեգծի պահպանման եւ որոշ գրպաններ լցնելու գործիք է: Իսկ ակտիվ ընդդիմությունը շարունակում է «վարչապետ բզկտել»: ՀՀ վարչապետը վաղուց է վարժվել այդ «բզկտոցներին», նույնիսկ «սրտիկներ» է հղում ընդդիմությանը: Շատերը հակված են խորհելու, որ ակտիվ ընդդիմությունը, հատկապես՝ պատգամավոր ընդդիմադիրները, սպառվել են, ի վիճակի չեն ռեժիմին ընդդիմանալու նոր ձեւաչափ մոգոնել: Այդուհանդերձ, հասարակ ու պարզ մարդիկ առաջարկելիք ունեն: Ահա այն. ստեղծել այլընտրանքային Սահմանադրություն, որտեղ, մյուս կարեւոր հարցերից բացի, առավել հստակ (մանրամասն) եւ կոշտ լծակներով մերժվի ՀԱԵ-ն քաղաքականացնելու ցանկացած փորձ, իրավական ջինջ մանրամասներով (կարմիր գծերով) հստակեցվի իշխանական դաշտ-կրոնաեկեղեցական տիրույթի տարանջատումը:

Խնդիրը շատ է խորացել, Հայաստանում ձեւավորվել է իշխանաքաղաքական ամենաթողություն: Հստակ չէ առաջարկվող խաղաղության գինը, որի «համահեղինակն» է ՀՀ վարչապետը: Ոմանք կարծում են, որ այդ գինն անկախ պետականության իրական կորուստն է, քանզի Հայաստանը փաստացի դարձել է տարածաշրջանի միջազգայնորեն ճանաչված կատարածու: Արդիականացված դիմակայությամբ օժտված նոր սահմանադրությամբ կկանխվի իշխանությունների անպարկեշտությունը, այդ թվում՝ համատարած ստերն ու սին խոստումները, եւ կգործի ՀԱԵ-ի զուգահեռաբար լրամշակված կանոնադրությունը: Առջեւում ՀՀ կառավարություն եւ ՀԱԵ եկեղեցական խորհրդի համատեղ աշխատանքն է:

Ինչ վերաբերում է ՀԱԵ-ի քույր եկեղեցիներին (Հայ ավետարանական եւ Հայ կաթոլիկ եկեղեցիներ), նրանք գործելու են նույն իրավական դաշտում եւ ապահովելու են փոխվստահելի, ենթակարգային հարաբերություններ ՀԱԵ-ի եւ ՀՀ իշխանությունների հետ: ՀԱԵ-ն շարունակում է զարգացնել այլ երկրների քրիստոնեական եւ միջազգային կրոնական կազմակերպությունների հետ փոխշահավետ, փոխվստահելի շփումները՝ ի նպաստ հայոց անկախ պետականության եւ Հայ առաքելական եկեղեցու հարաբերությունների բարելավման, ի փառս Քրիստոնեական ուսմունքի մարդասիրական առաքելության:

ՀԳ. *Բակային քննարկումներից մեկի ժամանակ մի թոշակառու ասաց, որ կարդացել է վերջերս լույս տեսած «Լեւոն Տեր-Պետրոսյան քաղաքականության կամերտոնը» վերնագրով գիրքը: Կարդացել է ու մտորել, թե ինչ երաժշտական գործիքով կարելի է բնութագրել գործող ՀՀ վարչապետին: Ներկաներից մեկը գտավ՝ «Ծնծղա Նիկոլ»: Մյուսը լրացրեց՝ այո, 1998-ին նա կոկորդ պատռող ծնծղա էր, հիմա «Կաստանյետ Նիկոլ» է, որովհետեւ ծնծղայի ճոխ զրնգոցն արդեն չկա, կա փայտե կաստանյետների կտկտոցը:*

Ազատ խոսքի Ձեր հրապարակում կարող է տպագրվել Ձեր խոսքը: Գրեք մեզ, զանգեք մեզ
011 (55,94) 52 66 70, info@hraparak.am
Երեւան 0010, Մաշտոցի 4

ԿԱՐԴԱՑԵՔ ՀԱՋՈՐԴ ՀԱՄԱՐՈՒՄ

Բաժանորդագրություն
Բաժանորդագրության համար դիմեք՝
Պրեսս Ստենդ՝ 093 88 68 01
Բլից մեդիա 52 53 01

Հրապարակ
Գլխավոր խմբագիր Արմինե Օհանյան
թողարկման պատասխանատու info@hraparak.am
Ստորագրված է տպագրության 29.11.2025թ., տպագրվել է «Գինդ» տպագրատանը: Տպաքանակը՝ 3000 օրինակ:

ԵԹԵ ՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ ՊԱՀԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՊԵՏՔ Է, ՈՐ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԼԻՆԻ, ՈՒՐԵՄՆ ԿԼԻՆԻ

Գալուստ ՍԱՐԳՍՅԱՆ

Ամեն անգամ, երբ լսում եմ պետության կործանման մասին ընդդիմության գույժերը, իսկ առավոտյան տեսնում եմ աշխատանքի շտապող մարդկանց բազմությունը, ամեն անգամ, երբ լսում եմ պետության հայկականության կորստի մասին ողբն ու տեսնում Երեւանի լուսառատ գիշերների խաղաղությունը, հասկանում եմ, որ պետության հետ ոչինչ էլ չի եղել, ու եթե ինչ-որ բան ու ինչ-որ մեկի հետ կատարվում էլ է, ապա դա ոչ թե պետության, այլ ընդդիմության հետ է կատարվում: Այո, որովհետեւ, եթե պատերազմներով ապրող այսօրվա աշխարհում դեռ հնարավոր է այսքան լույս ու այսքան խաղաղություն ունենալ, դա արդեն իսկ այն մասին է, որ պետությանը ոչ մի բան էլ չի պատահել: Մյուս կողմից, երբ տեսնում եմ, թե ինչ համառությամբ է օրվա իշխանությունը հայ մարդուն ու ՀՀ քաղաքացուն համոզում, թե իրեն չընտրելու դեպքում ինչպիսի ապոկալիպսիսի առաջ կկանգնի երկիրը, երբ տեսնում եմ, թե նա ինչպես է երկրի տնտեսության դիվերսիֆիկացումը կապում Ղազախստանից ու Ռուսաստանից՝ Ադրբեջանով Հայաստան հասած մեկ կամ մի քանի տասնյակ վագոն հացահատիկ բերելու հետ եւ չի կապում երկրի տնտեսության արդյունաբերականացման ու նոր շուկաներ նվաճելու հետ, երբ տեսնում եմ, թե օրվա իշխանությունն ինչպես է երկրի այսօրվա առաջընթացը ոչ թե երկրի ապագային նետված մարտահրավերների հաղթահարմամբ, այլ նրա երեկվա հետ համեմատելով չափում, երբ տեսնում եմ, թե ինչպես են գալիք ընտրությունների ամենակարեւոր օրակարգը պատերազմի ու խաղաղության հարցը եւ ոչ թե երկրի զարգացումն ու նրա ինքնիշխան սահմանների վերականգնումը դարձնում, երբ տեսնում եմ, թե ինչպես է միայն Ռուսաստանի ու Թուրքիայի միջեւ ընտրություն կատարող ենթապետություն դարձնելու անհագ մղում ցուցաբերում, հասկանում եմ, որ եթե ինչ-որ բան էլ կատարվում է, ապա, հաստատ՝ ոչ թե պետության, այլ այսօրվա իշխանության հետ է կատարվում:

Այո, որովհետեւ ո՛չ պատերազմը եւ ո՛չ էլ խաղաղությունը երբեք ոչ մի պետության գործառույթները չեն եղել ու չեն լինելու: Պետության հիմնական գործառույթը ոչ թե պատերազմը կամ խաղաղությունն է, ոչ թե հեղափոխությունը կամ չհեղափոխությունը, այլ երկրի սահմանները կանգուն պահելն ու զարգացած եւ բարեկեցիկ երկիր դարձնելը:

Եվ, այս առումով, պետության համար ամենեւին էլ կարեւոր չէ, թե ինչպես՝ պատերազմով, թե խաղաղությամբ, հեղափոխությամբ, թե առանց հեղափոխության է այդ խնդիրը լուծվում: Պետության համար կարեւորը խնդրի լուծումն է: Պետության գործառույթը նաեւ երկիրը հեղափոխություններից ու սոցիալական ցնցումներից զերծ պահելը չէ, այլ երկրի սահմաններից ոչ մի մետր չզիջելն ու «կորցրածը» վերականգնելը:

Ահա, ըստ իս, հենց սա է այսօրվա Հայաստան պետության խրամատը: Իսկ նրան այնտեղ՝ այդ խրամատում պահելը ոչ թե պետության, այլ երկրի ու ժողովրդի խնդիրն է: Ու եթե պետությանն այդ խրամատում պահելու համար պետք լինի, որ երկիրը պատերազմով անցնի, ուրեմն պետք է պատերազմով անցնի, եթե պետք լինի, որ խաղաղություն ունենա, ուրեմն պետք է խաղաղություն ունենա: Իսկ եթե Հայաստան պետությանն այդ խրամատում պահելու համար պետք լինի, որ երկիրը հեղափոխության միջով անցնի, ուրեմն պետք է հեղափոխության միջով անցնի:

Լրատվական գործունեություն իրականացնող՝ «Հրապարակ օրաթերթ» ՍՊԸ, Պետ. գրանցման վկայական՝ 03Ա 082118 տրված 09.09.08
Երեւան 0010, Մաշտոցի 4, հեռ. 52 66 70, info@hraparak.am